27 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 218 (3870)

Azg Վազգ

5-օրյա կալանք աշխարհի նախկին չեմպիոնին

Մոսկվայի քաղաքացիական դատարանը որոշեց պահել հինգ օրվա կալանք է նշանակել Միավորված քաղաքացիական ճակատի առաջնորդ Գարրի Կասպարովին «անհամաձայնների երթի» ընթացքում թույլ տված իրավախախտումների համար: Հաղորդվում է, որ դատարանը քննելով Կասպարովի վարչական իրավախախտման մասին քննչական մարմինների նյութերը, նրան մեղավոր է ճանաչել հանրահավաք անցկացնելիս երթի կանոնների խախտման, ինչպես նաեւ միլիցիայի աշխատակիցներին չենթարկվելու համար:

«Կարծում եմ, որ դատարանը անօրինական եւ չհիմնավորված որոշում է կայացրել, այդ պատճառով պաշտպանությունն արդեն վճռաբեկ կարգ բողոք է ներկայացրել դատարանի որոշման դեմ, որտեղ խնդրում է վերադաս ատյանին չեղյալ հայտարարել հաշտարար դատավորի որոշումը», ասել է Կասպարովի փաստաբանը:

Նախընտրական շոուն դիտարժան է դառնում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոյեմբերի այս վերջին շաբաթը որոշ բաներ պարզ կանի: Այսօր վերջապես կիմանանք, թե ո՞ւմ է պաշտպանելու Արաշես Գեղամյանը, իսկ գուցեեւ առաջադրվի: Այս քանի օրը կիմանանք Ռաֆֆի Հովհաննիսյանի եւ «Ժառանգության» կողմնորոշումների մասին: ՀՅԴ-ն վերջապես կասի՝ ո՞ւմ է նախագահի թեկնածու առաջադրելու: Անակնկալներ, այնուամենայնիվ, կարող են լինել, քանի որ Վազգեն Մանուկյանը, Արաշես Գեղամյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, ՀՅԴ-ն, Արթուր Բաղդասարյանն ու Արամ Կարապետյանը չտեղավորվեցին ինչ-որ մեկի գծած իշխանություն - Տեր-Պետրոսյան սեւ-սպիտակ դաշտում: Գուցե մի փոքր լույս մտնի բոլորովին անհասկանալի մի ֆիգուրի՝ Արամ Կարապետյանի պարագայում: Վերջապես շուտով ավելի հասկանալի կդառնա Արթուր Բաղդասարյանի գործելակերպը: Չնայած հասկանալի՝ դեռ չի նշանակում կանխատեսելի: Ծալենք երկու ձեռքի մատները, Արամ Կարապետյանը՝ մեկ, Արթուր Բաղդասարյանը՝ երկու, Վազգեն Մանուկյանը՝



երեք, ՀՅԴ թեկնածուն՝ չորս, նախկին եւ ներկա իշխանությունների թեկնածուները՝ հինգ եւ վեց: Ահա եւ Տիգրան Կարապետյանն առաջադրվեց՝ յոթ, որպես ամենա-ամենա այլընտրանքային թեկնածու. ոչ այս իշխանությունից է, ոչ նախկին, ինչո՞վ այլընտրանք չէ: Համենայն դեպս, մեկ շաբաթից հետո շատուշաս բան նախագահաթեկնածուական ողջ այս տուրեւառում պարզ կլինի, մանավանդ որ առաջադրման փաստաթղթերը ներկայացնելու վերջին ժամկետը դեկտեմբերի 6-ն է, իսկ մեր մամուլն էլ հոգնել է ամենաանհավանական եւ անօգուտ կանխագուշակումներից՝ ո՞վ ում հետ: Եվ մի շաբաթ-10 օրից հետո մամուլի էջերում իրենց տանջող «վերլուծաբանների» գործը կհեշտանա:

Տես էջ 2

ՈՈՅԱԼ ԱՐՄԵՆԻԱ

Դատախազությունը հրաժարվեց մեղադրանքներից

«Ռոյալ Արմենիայի» գործով դատական նիստի ժամանակ դատախազության ներկայացուցիչը հրաժարվեց նախկինում իր առաջադրած փողերի լվացման մեղադրանքից, ինչպես նաեւ վերանայեց «կազմակերպված խմբի» հասկացությունը, փոխարինելով այն «հանցավոր համաձայնությամբ»: Այսպիսով, մեղադրող կողմը պնդեց ընկերության համասեփականատեր Գագիկ Հակոբյանին ներկայացված հաշիվ-ապրանքագրերի կեղծման, հարկերից չարամտորեն խուսափելու, մախսանենգության եւ խարդախության մեղադրանքները: Ընկերության փոխտնօրեն Արամ Ղազարյանի դեմ մեղադրանքի ծավալից մեղադրող կողմը հրաժարվեց խարդախության մեղադրանքից, պնդելով հաշիվ-ապրանքագրերի կեղծման, հարկերից չարամտորեն խուսափելու եւ մախսանենգության մեղադրանքները: Մեղադրող կողմը միջնորդեց Գ. Հակոբյանին դատապարտել 6, իսկ Ա. Ղազարյանին՝ 2 տարվա ազատազրկման: Հիշեցնենք, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը՝ դատավոր Պարգեւ Օհանյանի նախագահությամբ կայացրել էր արդարացման դատավճիռ, ամբաստանյալներն ազատ էին արձակվել դատարանի դահլիճից: Քրեական վերաքննիչ դատարանը կհրաժարակի «Ռոյալ Արմենիա» ընկերության ղեկավարության դեմ գործով դատավճիռը նոյեմբերի 29-ին:

Այսօր արտահերթ նիստ

Նոյեմբերի 26-ին Ազգային ժողովի մամուլի կենտրոնից տարածել են հաղորդագրություն, որ «Աժ նախագահ Տիգրան Թորոսյանը ստորագրել է որոշում՝ ՀՀ սահմանադրության 70-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 2007 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 12-ին կգումարվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով»:

Գտնվեց «այլընտրանքը»

Նոյեմբերի 26-ին «Ժողովրդական կուսակցության» 14-րդ համագումարը Տիգրան Կարապետյանին առաջադրեց 2008 թվականի նախագահական ընտրությունների որպես նախագահի թեկնածու: Տիգրան Կարապետյանը անդամը առաջադրեց իր թեկնածությունը հայտարարելով, որ «այլընտրանք է լինելու բոլորին»: Տիգրան Կարապետիչը հայտարարեց, որ «այսօր մենք ձեւավորենք մեր թեկնածուն, որ կուսակցությունը չթողնի ժողովրդին առանց այլընտրանքային թեկնածուի»: «Ես համարում եմ, այսօր ժողովուրդը մեզնից բացի որեւէ այլ թեկնածուի չի համակրում», իր համախոհների առջեւ անկեղծացավ Տիգրան Կարապետյանը:

Հակամրցակցային համաձայնություն հիմա էլ փոխանակման կետերո՞ւմ

Ի՞նչ տեղի ունեցավ փոխարժեքի հետ շաբաթ եւ կիրակի օրերին

Շաբաթ եւ կիրակի օրերին Երեւանի փոխանակման կետերը հերթական տհաճ անակնկալը մատուցեցին բնակչությանը, դոլարը կտրուկ՝ 20-30 կետով արժեզրկվեց եւ հասավ մինչեւ 1 դոլարի դիմաց 280-285 դրամի: Դա անմիջապես իրարանցում առաջացրեց շուկայում, եւ շատերը, խուսափելու համար ավելի մեծ կորուստներից, շտապեցին մոտակա փոխանակման կետեր, որպեսզի իրենց մոտ եղած դոլարը փոխանակեն դրամով: Ինչն, անշուշտ, էլ ավելի խորացրեց խուճապը: Փաստորեն, հերթական անգամ մեր շուկայում ականատես եղանք մի երեւույթի, որը շատ նման է ապրանքային շուկաներում հակամրցակցային համաձայնության դրսեւորմանը, եւ որին փոխանակման կետերը մինչեւ վերջին մեկ-երկու տարին նույնպես հաճախակի էին դիմում: Պարզաբանումներ ստանալու համար դիմեցինք Հայաստանի կենտրոնական բանկ: Ըստ ԿԲ-ից ստացված տեղեկատվության, փոխանակման կետերի վահանակներում արձանագրված փոխարժեքն իրական շուկայական փոխարժեքը չէ:

Բանն այն է, որ շաբաթ եւ կիրակի օրերին բանկերը չեն աշխատում եւ չեն իրականացնում արտարժույթի առուվաճառքի գործառույթներ, ապարեզը թողնելով միայն փոխանակման կետերին: Մինչդեռ արտարժույթի առուվաճառքի հիմնական մասը կատարում են հենց բանկերը: Կոնկրետ ցուցանիշներով արտահայտված, շաբաթական արտարժույթի շրջանառության միջին ցուցանիշը կազմում է 170 մլն դոլար, իսկ փոխանակման կետերում շրջանառվում է ընդամենը 8 մլն դոլար: Հայաստանի ֆոնդային բորսայում ուրբաթ օրը իրականացված առուվաճառքի ծավալը կազմել էր մոտ 20 մլն դոլար, իսկ փոխարժեքը գտնվել էր 1 դոլարը 312 դրամի սահմաններում: Պատահական չէր, որ արդեն երկուշաբթի օրը (երեկ), երբ բանկերը սկսեցին աշխատել, փոխարժեքը փոխանակման կետերում վերադարձավ ուրբաթ օրվա մոտ գտնվող ցուցանիշին, կազմելով 300-305 դրամ 1 դոլարի դիմաց: ԿԲ-ից մեզ տրամադրված տեղեկատվության համաձայն, ֆոնդային բորսայում երեկ իրականացվել էր արդեն մոտ 25,7 մլն դոլարի առուվաճառք, 305 դրամի միջին փոխարժեքի պայմաններում: Փոխանակման կետերն արդեն սպիտված էին հրաժարվել իրենց սահմանած փոխարժեքից եւ մոտեցան շուկայական (բորսայական) փոխարժեքին:

ԿԲ-ից նաեւ հավաստիացրին, որ շարունակվելու է փոխանակման կետերի նկատմամբ վերահսկողության խստացումը, իսկ բնակչությանը խորհուրդ տվեցին խուճապի չենթարկվել եւ եթե չկա հրատապ անհրաժեշտություն, իրենց գումարները փոխանակել ոչ թե շաբաթ-կիրակի, այլ շաբաթվա մյուս օրերին:

Ինչ մնում է դոլար-դրամ փոխարժեքի հետագա հնարավոր վարագծին, ապա Կենտրոնական բանկից ստացած բացատրության համաձայն, դրամի արժեւորման միտումները պահպանվում են եւ սովորաբար դեկտեմբերի վերջին, Ամանորի նախորեին, խորանում: Այս տարի, սակայն, այդ գործընթացն ավելի վաղ տեղի ունեցավ, ինչը պայմանավորված էր միջազգային շուկայում եվրոյի նկատմամբ դոլարի արժեզրկմամբ: Այս օրերին 1 եվրոյի փոխարժեքը հասել է 1,49 դոլարի եւ հավանական է, որ շուտով կհասնի 1,5 դոլարի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ցեղասպանության թանգարան Վաշինգտոնում

Կալիֆոռնիայում տեղի ունեցած Ամերիկայի հայկական համագումարի 35-ամյակի ճաշկերույթին ներկայացվել են Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության թանգարանի ճարտարապետական էսքիզների ու ցուցանմուշների մասին պատմող տեսանյութն ու բրոշյուրը: Ներկայիս ծրագրի համաձայն, թանգարան-համալիրը զբաղեցնելու է շուրջ 20.000 քառակուսի մետր տարածք՝ հետագայում ընդլայնվելու հնարավորությամբ: «Գալեգը եւ գործընկերներ» թանգարանային նախագծման ընկերության ու «Մարթինես եւ Զոնսոն» ճարտարապետական ընկերության պատրաստած ցուցանմուշների միջոցով ներկաները հնարավորություն են ունեցել պատկերացում կազմելու ապագա թանգարանի մասին: Թանգարանի ծրագրերի ներկայացման ժամանակ ընթերցվել է նաեւ 1915 թ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի թոռան՝ Հենրի Մորգենթաու III-ի ուղերձը: Հայոց ցեղասպանության թանգարանում, ուր ներկայացված կլինեն բազմաթիվ ցուցանմուշներ, կգործեն մարդու իրավունքների եւ ցեղասպանության բաժին, հայկական ինքնությանը վերաբերող մուլտիմեդիա ծրագրերի բաժին, վերապրածների թատրոն եւ գործողություններ ձեռնարկելու կենտրոն: Նախատեսվում է, որ թանգարանը կգործի որպես բոլոր տարիքի մարդկանց համար մատչելի ուսումնական կենտրոն:

Միջազգային գիտաժողով Երեւանում՝ նվիրված Մեծ եղեռնի հուշահամալիրի 40-ամյակին

Այսօր «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» շքասրահում իր աշխատանքները կսկսի «Հիշողությունից՝ հիշատակում» թեմայով Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի 40-ամյակին նվիրված երկօրյա միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի պլենար նիստը ելույթով կբացի ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը: Այնուհետեւ ելույթ կունենան ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ այլք:

Առաջին եւ երկրորդ լիագումար նիստերում հայ զեկուցողներից բացի, զեկուցումներով հանդես կգան Բեռլինի Հումբոլդտի համալսարանից Ցիտիլմա Դարիեան, Քեմբրիջի Քինգս Քոլեջից Պամելա դե Կոնդաթոան, ՌԴ ԳԱ Ռուսաստանի պատմության ինստիտուտից Եկատերինա Բոլտունովան, ինչպես նաեւ Ամստերդամի «Սեյֆո կենտրոն-1915» կազմակերպությունից Սաբրի Աթմանը, որի զեկուցման թեման է «Ասորիների ցեղասպանությունը եւ մշակութային ժառանգության ոչնչացումը»:



Նոյեմբերի 28-ին գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում, որտեղ հայ մասնակիցների հետ ելույթ կունենան Գերմանիայից Յուրգեն Գիսպերտը, Հիրոսիմայի համալսարանից Հիդեկի Ֆուչիոնեն եւ Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտից Լորենս Ռիսսերը: Նույն օրը տեղի կունենա գիտաժողովի եզրափակիչ նիստը:

Թերթի տարողությունը հնարավորություն չի տալիս անդրադառնալու գիտաժողովի հայ մասնակիցներին: Պարզապես ասենք, որ թեմայի ընտրության առումով չափազանց հետաքրքրական են նրանց զեկուցումները, նվիրված Ծիծեռնակաբերդի Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրին, բոնի կրոնափոխված համշենցիների ինքնությանը, Արեւմտյան Հայաստանի պատմական հուշարձաններին, Թուրքիայի տարածքում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացմանը:

Հ.Ղ.

ԵԱՀԿ ԱԳ նախարարների հերթական հավաքը Մադրիդում

Մինսկի խումբը կանի իր հայտարարությունը

Նոյեմբերի 29-30-ին Մադրիդում տեղի կունենա ԵԱՀԿ (Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն) երկրների արտաքին գործերի նախարարների 15-րդ հավաքը: Նախնական օրակարգի համաձայն, հյուրընկալող երկրի՝ Իսպանիայի ներկայացուցչի, ԵԱՀԿ գործող նախագահի, նաեւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահի խոսքերից հետո կներկայացվի ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի զեկույցը: Այնուհետեւ կենթադրվեն երկրների պատվիրակությունների ղեկավարների ելույթները:

Առդեն իսկ նախապատրաստական փուլում ստեղծված փաստաթղթերի ընդունումից հետո ակնկալվում է հայտարարության ընդունում, որն, ի դեմ, անցյալ տարի բրյուսելյան հավաքի ժամանակ այդպես էլ չամբողջացավ:

Մադրիդում կայանալիք ընդհանուր բնույթի միջոցառումների ցանկում ներգրավված են նաեւ երկկողմ, բազմակողմ այլ ձեւաչափերի հանդիպումներ, որոնց թվում հավանական է նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, գուցե եւ Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հետ՝ ոչ անպայման երկկողմ ձեւաչափով:

Հարավային Կովկասում ԵԱՀԿ բաղդատական հակամարտության կարգավորման հարցով Մինսկի խմբի համանախագահները հանդես կգան հայտարարությամբ, որն, ըստ էության, կարող է կողմնորոշել այն հարցում, թե ինչ ընթացք կունենա բանակցային գործընթացը Հայաստանում եւ Ադրբեջանում նախագահական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում:

Նախնական տվյալներով, նախատեսվում է նաեւ քննարկել Ռուսաստանի՝ ԵԱՀԿ երկարաժամկետ դիտորդական առաքելության դիտորդների թվի կրճատման առաջարկությունը, որին միացել է նաեւ Հայաստանը: Եվ մինչ նախարարները Մադրիդում կհանդիպեն, ԵԱՀԿ բարեփոխումների առաջարկությամբ հանդես եկող Ռուսաստանում դեկտեմբերի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելություն Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ինստիտուտների գրասենյակը չի իրականացնի՝ մերժումը բացատրելով սեփական մեթոդաբանությունից չհրաժարվելու մոտեցմամբ, նաեւ դիտորդների թվի կրճատման ու այլ սահմանափակումների անընդունելիությամբ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ողջակիզման իրազեկման շաբաթ Տորոնտոյում

Կանադայի «Զորյան» ինստիտուտի բաժանմունքի՝ «Մարդու իրավունքների եւ ցեղասպանության ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի» կազմակերպությամբ տեղի ունեցած նոյեմբերի 16-ի դասախոսությանը Մկնալթ համալսարանի պատմության պրոֆեսոր եւ հումանիտար գիտությունների իսկական դոկտոր **Վայթը** խոսել է այն բազմաբնույթ կարգերի մասին, որոնք գոյություն ունեն հայոց ցեղասպանության եւ հրեական ողջակիզման միջեւ, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանն ուղարկված հաղորդագրությունը:

Իր բացման խոսքում Կանադահրեական կոնգրեսի համայնքային հարաբերությունների տնօրեն Լեն Ռոտները նշել է, որ միջոցառումը 27-րդն է եւ նպատակ ունի բոլոր տարիքի եւ տարբեր էթնիկական խմբավորումների ներկայացուցիչներին հրազեկելու ընդհանրապես ցեղասպանությունների եւ մասնավորապես Հոլոքոստի մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրոնական եւ ռասայական անհանդուրժողականության վնասակար հետեւանքների վրա:

«Ցեղասպանությունն ու Հոլոքոստը միայն հայերին եւ հրեաներին չեն պատկանում, դրանցից ամբողջ աշխարհը պետք է դասեր քաղի խուսափելու համար հետագայում նույնանման երեւույթներից», ասել է Վայթը:

Միջոցառման կազմակերպմանը մասնակցել են նաեւ ՀԲԸՄ-ն, Հայ համայնքի կենտրոնը եւ Օնտարիոյի հրեական կոնգրեսի բաժանմունքը:

Հ. Օ.

Զբաղվածության պետական գործակալությունը 15 տարեկան է

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» (ԶՊԾ) գործակալությունն այս տարի նշում է իր հիմնադրման 15-ամյակը, որի շրջանակներում նոյեմբերի 24-25-ը սեմինար էր կազմակերպել Ծաղկաձորում: Երկօրյա սեմինարի ընթացքում գործակալության պետ **Սոնա Հարությունյանն** ու բաժինների պետերը լրագրողներիս ներկայացրին իրենց աշխատանքային խնդիրները, ոլորտի դժվարությունները, միջազգային համագործակցային ծրագրերը, աշխատաշուկայի վերաբերյալ իրենց կանխատեսումները:

Սոնա Հարությունյանի խոսքով, ոլորտում բավական խնդիրներ կան, բայց նաեւ առաջընթաց կա: Նշելով, որ գործակալության մասին մարդկանց տեղեկացվածության աստիճանը ցածր է՝ բաժնի պետը հավելեց, որ այս առումով եւս իրենք բավական անելիք ունեն: Սեմինարին մասնակից ոլորտի ներկայացուցիչները՝ գործակալության ու աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչները կարետրեցին ոլորտի ռազմավարության մշակումը, որի մեկնարկը կտրվի 2008-ին:

Գ. Գ.

Նախընտրական շուն դիտարժան է դառնում

1-ին էջից

Բայց անկախ այս բոլորից, անկախ առաջադրվելիք թեկնածուների թվից, որն, ի դեմ, եթե մի տասնյակի չհասնի, շատ ամոթ կլինի հայերիս համար՝ անցյալի փորձից ելնելով, «շատ լինի, քիչ չլինի» կարգախոսի հովանու ներքո, ընտրական շուն արդեն սկսված է, նախկին եւ ներկա իշխանությունների ներկայացուցիչները վառել են թեկնածուական լեզվակռվի մի մեծ խարույկ եւ երկու կողմից արդեն լիուրբ ցախ են լցնում՝ շուն ավելի դիտարժան դարձնելով: Խարույկի բորբոքումը սկսեց Տեր-Պետրոսյանը, նրանից հետ չմնացին իշխանական վերեւներում՝ ամեն անգամ մի նոր գիրկ փայտ լցնելով նախկին նախագահի գլած կրակին:

Բայց կողքից էլ պակաս չեն մնում: Ահա եւ Սամվել Բաբայանը խոսեց՝ իր բաժին ճյուղերի խուրձը խսած խարույկի մոտ շտապելով:

Շաբաթ օրը ՀՈԱԿ-ին միանալու մասին հայտարարած Սամվել Բաբայանը հասավ՝ թե Հայաստանի այն ժամանակվա քաղաքական գործիչներն ու քաղաքական ղեկավարությունը կաստրում էին հանցագործություն՝ Լեռնային Ղարաբաղում թույլ չտալով ազատագրել տարածքները. «Ես կնշեմ մարդկանց՝ անունազգանուններով, ում՝ ինչ հրահանգ են տվել, ինչ բանագնացներ են ուղարկել Ղարաբաղ, Զանգեզուր, չմասնակցելու համար»: Իհարկե կնշի, իհարկե կասի՝ կասկած չկա դրանում: Այս խոսքումը նշանակում է շուն վառ պահել: Շուտով մեկը կհիշի Մասիսի թունավորումները եւ կանվանի մեղավորներին: Մի ուրիշը Համբարձում Ղանդիլյանի սպանության պատվիրատուին կգտնի, պարզ է՝ ինչ-որ մեկի թղթատելուն ի պատասխան, երրորդը կսկսի հոկտեմբերի 27-ի պատվիրատուներին մատնացույց անել: Կոմպրոմատների պակաս չի զգացվի: Եվ ոչ էլ դրանց հասարակությանը փոխանցողների:

Մի խոսքով, բուն քարոզարշավին դեռ չհասած՝ նախագահական մրցավազքին մասնակցելու հայտ ներկայացրած առնվազն երկու կողմ միմյանց վրա ցեխ են շպրտում՝ առանց մի պահ անգամ մտածելու, որ ընտրողը նրանցից սպասում է մի խելոք խոսք, իր ցավը դարմանելու գոնե խոսքում, իր երեխաների նորմալ ապագայի երաշխավորը լինելու պատրաստակամություն եւ ոչ թե տգեղ լեզվակռիվ: Հարկավոր է չզվեցնել ընտրողին, կանգ առնել, փոխել գործելակերպը: Սա հատկապես վերաբերում է Տեր-Պետրոսյանին, որն արդեն երեք ելույթ մեղադրական ճառեր է կարդում, չհանգելով վերջապես այն մտքին, թե արդեն պետք է հանգիստ թողնել ուրիշներին եւ խոսել այն մասին, թե ինչ պետք է փոխի, ումո՞վ, ինչպե՞ս, ո՞ր ռեսուրսներով, ինչպիսի՞ տնտեսական քաղաքականությամբ: Թե չէ՝ «Դու ես կոռումպացվածը»-«Չէ, դո՛ւ ես կոռումպացվածը», «Դու ես հանցագործը»-«Չէ, դու ես հանցագործը» տղայական խաղից ոչ որ դեռ չի շահել՝ այն դառնում է կամ «տեցի կուզ», կամ տղայական, կամ նույնիսկ հանցագործ «ռազբորկա»:

Ամեն օր կարելի է տեսնել, թե ինչպես է շիկանում մթնոլորտը, միմյանց սխալ հանելու մրցավազքում ինչպես է հետին պլան մղվում այն, որ այս երկրին քաղաքակիրթ ընտրապայքար, քաղաքակիրթ ընտրություններ եւ լեգիտիմ նախագահ են անհրաժեշտ, իսկ այդպիսիք միմյանց վրա ցեխ շպրտելով հազիվ թե հնարավոր լինի վասակել: Այսպես կարելի է, ընդհակառակը, միմյանց թշնամացած հասարակություն, բուն նպատակը մոռացող թշնամական բանակներ ունենալ, մինչդեռ ընտրություններից հետո այս փոքրիկ երկրի փոքրաթիվ հասարակությունը շարունակելու է ապրել իր սովորական կյանքով: Իրար թշնամացած մարդկանցով հասարակություն կլինի՞: Այսպես շարունակվելու դեպքում, եթե քաղաքացիական խժդժություն չառարկայանա՝ քանի որ հայերս, այնուամենայնիվ, «վրացիի» խելին չենք, չենք խուսափի, սակայն, մարդկանց հոգիներում տիրող քաղաքացիական պատերազմից՝ երբ կարելի է տեսնել ատելությունից կապտած դեմքեր, լեզվակռվից ամեն իմաս կորցրած աչքեր:

Ես դեմ եմ այդպիսի նախընտրական Հայաստանում ապրելուց: Հերիք է իրար սեւացնել: Հերիք է Հայաստանի քաղաքական դաշտը ատելության դաշտի վերածել: Հիմա եւ այստեղ սկսեք խոսել, թե ինչ պետք է փոխեք, որ ես ժողովրդի կյանքը լավանա: Առհասարակ՝ լուսանցքներ թափելուց ձեռնպահ մնացեք, քանզի երբ ատելության ճնշագունդը թափ է հավաքում՝ սեղմելիս տակով է անում ամեն ինչ:

Մոնթեն միշտ ներկա է

Ավո... Նրա նմանները ծնվում են 50 կամ 100 տարին մեկ անգամ: Նա Հայաստանի ազատություն ու անկախություն գովերգող քարոզիչն էր: Թշնամու գնդակից չէր վախենում, անվախ էր, հայրենիքի նվիրյալ, հմուտ հրամանատար: Գաղափարական մարդ էր: Ապրում ու պայքարում էր գաղափարներն ու երազանքներն իրականություն դարձնելու համար: Նոյեմբերի 25-ին մեծ հայրենասերը կդառնար 50 տարեկան: Տավոլ, 1993-ի հունիսին նրա կյանքի թելը կտրվեց...

Կիրակի առավոտյան երկրի պետական այրերը, մարտական ընկերներն ու քաղաքական գործիչներն այցելեցին Եռաբլուր, Ավոյի գերեզմանին ծաղիկներ դրեցին, հարգանքի տուրք մատուցեցին, խնկարկեցին: Հիշեցին Ավոյի հետ կապված պատմություններ...

«Մոնթեին երբեք անգամ եմ տեսել: Մարդասեր, ազնիվ, հայրենասեր մարդ էր: Իր անձի համար ոչինչ չէր ուզում: Չէր վախենում կռվից: Ասում էր՝ թուրքի գյուլեն չի հասնի ինձ: Վախ չուներ: Հմուտ ղեկավարում էր ու հիանալի զինվորներ պատրաստում», հիշում է Հայաստանի պատմության նախարար Միխայել Հարությունյանը:

Մոնթե Մելքոնյանի ծննդյան 50-ամյակի առթիվ Երեւանի թիվ 11 դպրոցն անվանակոչվեց՝ կրելով քաջ հայորդու անունը: «Մենք Մոնթեի զինվորներն ենք», «Մենք Մոնթեի գործը շարունակողներն ենք», ասում են դպրոցի աշակերտները:

ԼՂՀ ՊՆ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը Ավոյի մարտական ընկերն է. «Մոնթեի կարճատեւ զինվորական կյանքը լի էր բազմաթիվ մարտական գործողություններով: Դպրոցի անվանակոչության ժամանակ հիշեցի, որ պատերազմի ժամանակ նա ասիպում էր, որ դպրոցները շարունակեն գործել: Ազատում էր ուսուցիչներին, որ գնային դասավանդելու: Բոլորից նվիրյալն էր, միշտ սթափ էր: Որպես հրամանատար, մարդ, զինվոր հզոր անձնավորություն էր»:

Անվանակոչությունից զատ դպրոցում բացվեց Մոնթեի թանգարանը: Այստեղ իրենց արժանի տեղն էին գտել Մոնթեի լուսանկարները, նամակները ու զինվորական հագուստը:

Մոնթեին նվիրված հոբելյանական միջոցառումները շարունակվեցին «Հաղթանակ» զբոսայգում, որ մեծ շուքով բացվեց հերոսի կիսանդրին, իսկ երեկոյան Ազգային օպերայի եւ բալետի թատրոնում կազմակերպվեց հուշ-երեկո՝ ներկայությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ բարձրաստիճան պատասխանատուների:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրահավաքներին չմասնակցելու զգուշացումներ

«Հայ կամավորականների համախմբում» կազմակերպությունից մեր ստացած հաղորդագրությունը տեղեկացնում է, որ անցյալ ուրբաթ-շաբաթ օրերին Երեւանի ոստիկանական բաժիններ են հրավիրվել մի խումբ մարդիկ, որոնք բանավոր զգուշացվել են, որ չմասնակցեն հանրահավաքներին եւ չկազմակերպեն այլոց մասնակցությունը: Հակառակ դեպքում նրանց սպառնացել են՝ «լավ չի լինի»: Հետաքրքրական է, որ հրավիրվածները որեւէ առնչություն չեն ունեցել վերջին հանրահավաքների կազմակերպմանը, իսկ որոշները անգամ չեն մասնակցել դրանց: Նրանց թվում եղել են Ժիրայր Սեֆիլյանի գլխավորած «Հայ կամավորականների համախմբման» անդամներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի

Պոստարի եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅՈՒՍԻՓ ԱՐԵՏԻՆԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՅՄՈՅՐ ՅՈՒՍԻՓԵԱՆ / հեռ 529221

Հասցեատիրոջին (գրվածքի) / հեռ 582960

Լուսագրության մենակ / հեռ 581641

Հանձնարար. ծառայություն / հեռ 582483

Շտաբային լրահաւաք ծառայություն / հեռ 529353

Հանձնարարական շարածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Ասակերտը գործիք չէ, մարդ էակ է»

Որի ձեւավորման համար ուսուցիչ է պետք

Այսօր հասարակության ընդհանուր պատկերը ձեւավորվում է ներկայումս, ըստ երիտասարդ սերնդի բարոյական նկարագրի ու հետաքրքրությունների: Անառարկելիորեն այսօր ձեւավորվել է երիտասարդության մի սակավ ճարներ ազնիվ գաղափարներով եւ ինտելեկտուալ հետաքրքրություններով:

Սակայն հասարակության մեջ տիրող հոռի բարքերն իրենց կնիքն են դրել երիտասարդության գերակշռող հատվածի մտածողության վրա՝ որպես գաղափարազուրկ, նեղ հետաքրքրությունների տեր, հատկապես մարդկային հարաբերությունների մեջ անբարեկիրթ մի սերնդի: Երբ հասարակական գիտակցության մեջ փոփոխությունների անհրաժեշտության գլոբալ խնդիր է դրվում, դա նախ եւ առաջ ենթադրում է արմատական հեղաշրջում կրթական ոլորտում, որի մեջ առանցքային, կարեւորագույն դերը վերապահվում է ուսուցչին եւ դասագրքերին: Այս առումով օրինակելի է Նյու Ջերսիից ամեն տարի Հայաստան այցելող **Սիլվա Տեր-Ստեփանյանի** նվիրումը հայ դպրոցին եւ սերնդի կրթությանը: Սիլվան եվրոպական բարձր կրթություն ստացած մանկավարժ-մեթոդաբան է, հեղինակ բազմաթիվ դասագրքերի՝ արեւմտյան կրթության չափանիշներին համապատասխան: Միայն մեկ տարվա ընթացքում 12 գիրք հեղինակելն արդեն իսկ Սիլվա Տեր-Ստեփանյանի՝ հայ մանուկների կրթության գործին անմնացորդ նվիրումի հաստատումն է: Դրանցից չորսին, որ վերջին այցելության ընթացքին Հայաստան էր բերել («Հայը եւ իր այբուբենը», «Հայը եւ իր պատմությունը», «Հայը եւ իր գրողները», «Խաչբառեր եւ լուծումներ»), կանդրադառնանք առանձին հոդվածով: Նրա մանկավարժության փիլիսոփայության հիմքում ընկած է մարդուն, երեխային իբրեւ ինքնուրույն անհատականության ընդունելու սկզբունքը. իր կյանքի իմաստավորումը՝ օտարության մեջ հայ երեխայի ազգային ոգին արթուն պահելու առաքելությունն է, եւ այս ուղղությամբ տարիների նրա ջանքերը շատ արդյունավետ են եղել: Իր համար գլխավորը տեսական հարթությունից հարցը գործնական ոլորտ տեղափոխելն է: Մանկավարժական շատ ճկուն ու նուրբ մեթոդներով է Սիլվան մշակում իր կրթական հայեցակարգը եւ իրականություն դարձնում դասագրքերի եւ դասընթացների ձեւով: Մեթոդաբանական ձեռնարկները, ուսուցողական, դիդակտիկ բազմաբնույթ նյութեր պարունակող գրքերը, հայոց պատմությանը, հայ գրականությանը, եկեղեցուն, ազգային սովորույթներին վերաբերող, հասցեագրված են ամենափոքր տարիքի երեխայից, իր խոսքերով, մինչեւ 100 տարեկանին, ովքեր ուզում են պատկերացում կազմել հայ կյանքի ու մշակույթի մասին: Իր դասագրքերում ամենակարեւորը երեխայի ներքին նկարագրի ձեւավորումն է՝ վաղ հասակից ճաշակ եւ նրբավարություն ներարկելը, բարոյագիտություն եւ կենցաղագիտության կանոններին տեղյակ դարձնելը: Ինքը շատ է կարեւորում նաեւ դպրոցական կյանքի կարգ ու կանոնը, ուսուցչի առաքինությունները անձնական օրինակով, բովանդակային եւ արտաքին ձեւավորման առումով դասագրքերի պաշտած մակարդակը, դպրոցական համազգեստը եւ այլ գործոններ:

Իր ջանքերով հիմնադրվել եւ արդեն տարիներ գործում է Հայ եկեղեցու Մ. Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդարանի Հայ դպրոցների կրթական կենտրոնի «Խրիմյան» ճեմարանը, որտեղ երեքամյա առանձին դասընթացներով հայ երեխաներին ուսուցանում են հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն, մշակույթի, կրոնի, եկեղեցու պատմություն եւ այլ առարկաներ: Հայտնի է նրա «Առ-Մարալ» ծրագիրը բազմաբնույթ ու բազմատարր դրսեւորումներով: Այս վարժարանը, որ գործում է ժեյցարական դպրոցի մոդելով, երեխային պատրաստում է կյանքին՝ աշխարհիկ եւ հոգեւոր գիտելիքների հետ երեխային մատուցելով բարոյագիտության եւ կենցաղագիտության մշակույթ: Սիլվան հայ մարդու նկարագրի ու բարոյականության սեփական պատկերացումն ունի՝ Հայ առաքելական եկեղեցու դավանանքին հավատարիմ քրիստոնյա, ազգային արժեքների գիտակցումով մարդն է: Սիլվա Տեր-Ստեփանյանը աշխատանքներ է տանում «Խրիմյան» կրթարանի փորձը Հայաստան տեղափոխելու համար: Առաջին այսպիսի դասընթացները գործելու են Օշականում՝ ծրագրերի, մեթոդական ձեռնարկների, դասագրքերի իր օժանդակությամբ: Կրթության մեր համակարգում հատկապես այս ասպարեզում մեծ դատարկություն կա. երեխայի ներքին նկարագրի ձեւավորման խնդիրը բարձիթողի վիճակում է եւ գնալով խորանում է աշակերտ-ուսուցիչ-ծնող հարաբերություններում շուկայական տխուր բարքեր թափանցելու պատճառով: Ինչպես Սիլվա Տեր-Ստեփանյանն է ասում, Հայաստանում կրթական բարեփոխումները կոսմետիկ բնույթ ունեն, անհրաժեշտ է համակարգի արմատական փոփոխություն: Ամենակարեւորը՝ ուսուցիչները պիտի պատրաստվեն եւ ուսուցչի վերաբերմունքը աշակերտի հանդեպ պիտի փոխվի. «Աշակերտը գործիք չէ, մարդ էակ է ու պետք է անոր վրա կատարվի թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեւոր, թե՛ մտային աշխատանք»: Փորձիկների՝ 3-4 տարեկանների համար նախատեսված դասագրքերը պատկերավոր են, գրված շատ մատչելի լեզվով, գեղեցիկ ձեւավորմամբ, դիդակտիկ նյութերի առատությամբ, աշխույժ երկխոսություններով: «3-4 տարեկան երախան ամեն կիրակի ծնողին հետ եկեղեցի կերթա, պատարագ կունկնդրե, խունկի հոտը կզգա, շարականներու երգեցողության կհետեւի: Պետք է դպրոցին ամեն ինչ ընել, որ այս ամենուն բացատրությունը իրեն համար շատ բնական ըլլա», ասում է Սիլվան:

Ժամանակները փոխվում են, փոխվում է նաեւ սփյուռքում հայ դպրոցի անհրաժեշտության ասփիճանը: «Հետեղեռնյան առաջին սերունդի հայ մարդը կուզեր հայությունը պահել. իր առաջին գործը եկեղեցի, դպրոց հիմնելը եղավ եւ խոշոր գրագետներ տվավ՝ գրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ: Հիմա պայմանները փոխված են: Ժամանակին զոհողություններու գնով կըլլար, հիմա ալ վերջացած է: Ուսուցիչի պակաս կա եւ անոր կամավոր հիմունքներով դպրոց ընդունիլը սխալ է, մասնագիտական ձեւով պիտի ըլլա եւ ամենակարեւորը՝ անոր առաքելությունը պիտի առահովված ըլլա, պիտի վճարվի օտար դպրոցներուն պես:

Ամենօրյա դպրոցներու մեջ սահմանափակ է հայերենի դասընթացը: Ծնողք զուտ հայկական դպրոցներ չեն ուզեր իրենց զավակները: Մեր հին դպրոցները կփակվին, կբացվին նորերը տարբեր գաղութներու մեջ եւ ասիկա կախում ունի ատոնց շուրջը եղած անհատներեն: Եթե այդ տղան դպրոցը ավարտելեետք աշխատանքով չպիտի առահովվի, դպրոցը վերջացավ: Դպրոց չպիտի բացվի զուտ դպրոց բանալու սիրույն, ատոր անհրաժեշտությունը չունինք: Եթե լեզվի, հայոց պատմության ուսուցմամբ գիտելիքներ չտրվին, ինչպես հարկն է, հայ դպրոցն ինչ արժեք ունի: Հայագետ եթե չըլլան, հայախոս պիտի ըլլան գոնե: Մեր «Խրիմյան» վարժարանը շատ սիստեմատիկ դասընթացներ կընե եւ ամերիկյան կրթական մարմինը ընդունած է հայերենը որպես երկրորդ լեզու, կտրվի վկայական, որով ուսանողը իր համալսարանին մեջ կազատի այն դասընթացեն, որուն համար պետք է վճարեր»:

Սփյուռքում հայապահպանման, հայ դպրոցի գոյատեւումը պայմանավորված է նաեւ Հայաստանում հայոց լեզվի ու մշակույթի վիճակով, դրանց հանդեպ մեր վերաբերմունքով ու պատասխանատվությամբ: Ներկա շրջանում սփյուռքահայ դպրոցները դժվարությունների առաջ են կանգնած. աշակերտությունը նվազել է եւ հետաքրքրականը այս երեւույթի մեջ հոգեբանական նաեւ այն գործոնն է, որ կապված է Հայաստանի հետ. «Սկզբնական շրջանին ամենը կաշխատեին դպրոցը պահել, Հայաստանի հետ կապը ուժեղացնել. անկախությենեն ետքը ոմանք, որ շատ խանդավառ էին հայերենով, կըսեն, ով որ կուզե հայերեն սովրիլ, թող Հայաստան երթա: Ասիկա անտրամաբանական է: Երբ տարեկան մանչուկը Հայաստան պիտի ղրկվի»: Մտորելու տեղիք տվող տեսակետ-հարցադրում. իսկ Հայաստանի կրթական ներկա համակարգը ունի՞ բարոյական ու մտավոր այդ ներուժը, պատասխանությունն ու մակարդակը:

ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 10.00-ին «Արմենիա» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի կունենա Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի 40-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

◆Նույն ժամին «Անի պլազա» հյուրանոցում կկազմակերպվի մամուլի ասուլիս, որին ներկա կլինեն ֆինանսների փոխնախարար Դավիթ Ավետիսյանը, Եվրոպական հանձնաժողովի բարձրաստիճան պատգամավորներ:

◆Ժամը 10.30-ին «Երեւան» հյուրանոցում տեղի կունենա «Հակամարտությունների լուսաբանումը» թեմայով սեմինար:

◆Նույն ժամին «Արմենիա-Մարիոթում» տեղի կունենա սեմինար մարդու իրավունքների մասին:

◆Ժամը 11.00-ին «Փաստարկ» ակումբում կկազմակերպվի «Ձավախք» միության ղեկավար, ԱԺ պատգամավոր Շիրակ Թորոսյանի մամուլի ասուլիսը:

◆Մեկ ժամ անց կգումարվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստը:

◆Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբում կհյուրընկալվի Պարույր Հայրիկյանը:

◆Մեկ ժամ անց «Հայելի» ակումբի հյուրերն են Արշակ Սադոյանը եւ Կարապետ Ռուբինյանը:

◆Ժամը 13.00-ին Փաստաբանների պալատում (Զաֆյան 3) տեղի կունենա փաստաբան Կարեն Մեժլումյանի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 13.00-ին Խնկո-Ապոր անվան գրադարանում տեղի կունենա «Ով, եթե ոչ մենք» հակակոռուպցիոն ինտերակտիվ կրթական ծրագրի ամփոփիչ ներկայացումը:

◆Նույն ժամին Չարենցի արձանի մոտ (ռադիոսան մոտ) տեղի կունենա միջոցառում Չարենցի մահվան 70-րդ տարելիցի կապակցությամբ:

◆Ժամը 13.00-ին «Հայաքվե» ակումբում տեղի կունենա ՀՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Խաչատրյանի եւ բեմավարուհի մանկավարժական համալսարանի ուսխորհրդի նախագահ Գոռ Հարությունյանի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 14.00-ին Ազգային գրադարանի մատենագրության բաժնում տեղի կունենա «Հայ գիրքը 1901-20-ին» մատենագիտության ընդհանրադես:

◆Ժամը 15.00-ին ՄԱԿ-ի գրասենյակում կազմակերպվում է սեռական եւ վերարտադրողական առողջության թեմայով երիտասարդական քննարկումը:

Նար-Դոսի եւ Չարենցի փողոցները՝ առեւտրական թունելներ

Շատերն են այն կարծիքին, թե հպարտանալը կամ, ավելի ճիշտ, լոպազանալը հին հայկական սովորություն է: Այս սովորությունը հատկապես գլուխ է բարձրացնում, երբ ցանկանում ես արտասահմանից ժամանած հյուրերիդ զարմացնել, հիացնել այնպես, որ «բերանը բաց մնա»: Տանում ես Գառնի-Գեղարդ՝ ցույց տալու սրբատեղիներն ու հուշարձանները, մոռանալով վաճառականների ու մուրացկանների հոծ խմբերը՝ հարակից աղբակույտերով (իրավիճակը չէիր նախատեսել, բայց ինչ արած), կամ ուղեկցում ես Օղերայի եւ բալետի թատրոնի բակ, այստեղ էլ նստարաններին նստած ու զբոսնող համաքաղաքացիներդ են անընդհատ չրթում ու թքում արեւածաղկի սերմերը (թու, սրանց էլ չէիր նախատեսել), հյուրասիրում ես ամենաձոխ ռեստորաններում ու սրճարաններում, ըստ քո ճաշակի եւ արժեհամակարգի «պատիվ ես տալիս» այս կամ այն խաղատանը կամ հյուրանոցում, շաբաթ-կիրակի անպայման տանում ես «վերնիսաժ»... Եվ այսպես՝ այնքան, մինչեւ հյուրիդ հոգին դուրս գա ու գնալու ժամանակը վրա հասնի: Սակայն փոխանակ փորձես բացատրել կամ հյուրիդ «այլը կարել» փնթի եւ ունեցածի արժեքը փչացնող քո համերկրացիների վրա, լավ կլինի հյուրին դիմավորելուց առաջ վերցնես երեւանի քարտեզն ու խաչ քաշես մի շարք փողոցների վրա, որոնցով երթեւեկելը ոչ միայն տառապանք է՝ խցանումների ու հավերժական թվացող քանդուքարափի պատճառով, այլեւ ամոթալի:

Ուրեմն առաջին հասլիկ ու հանգամանալից խաչերը կարող ես քաշել Նար-Դոսի եւ որոշ չափ Չարենցի փողոցների վրա: Հետո՞ ինչ, որ նրանց զուգահեռվող խանջյանի ու Ա. Մանուկյանի փողոցները գրեթե անանցանելի են, հատկապես օրվա որոշ ժամերի: Բայց ինքդ մտորիր՝ ավելի լավ չէ՞ հյուրը մնա խցանման ճիրաններում, քան տեսնի բազմաթիվ դագաղներով ու վառարաններով սկսվող Նար-Դոսը, որ շարունակվում է շինանյութի եւ ավտոպահեստամասերի այնպիսի մի բազմազան կրպակաշարերի ու խանութների միջով, որ չի զիջում ոչ մի «Ֆիրդուսոցի»: Հատկապես հաշվի առ, որ Նար-Դոսի փողոցը եւ Չարենցի փողոցի վերջնամասը նեղ են կամ նեղացվել են հենց իրենց՝ բնակիչների «թեթեւ ձեռքով»: Հետո՞ ինչ, որ քաղաքի այս հատվածը գտնվում է կենտրոնական համարվող մասում, բանուկ է եւ անխուսափելի, եթե փորձում ես մեքենայով, ասենք, կայարանից հասնել Նոր Նորք թաղամաս կամ Հերացու փողոց:

Այստեղ մայթեզրեր չկան, քանի որ դրանք վաղուց են դարձել խանութներ ու կրպակներ: Խանութների առջեւ ցուցադրվում է վաճառվող ապրանքների ողջ բազմազան տեսակին՝ զուգարանակոնքերի շղթային հաջորդում են գույնզգույն սալիկների ցուցադրական դարակաշարերը, դրանց կողքին աչքի են զարնում տարատեսակ դռներն ու քիվերը, դե, իսկ անվադողերի շարքերը, «յուղ», «կամեռ», «ապակի, ախտեսուարներ», «քյաբաբ», «լահմաջո» եւ այլ ցուցատախտակներն էլ աչքդ են խցկվում աներկբա մի համառությամբ, եւ քեզ զգում ես անվերջանալի բենզինահոտ թունելի մեջտեղում:

Այս փողոցներում ամենաանպատշաղն ու վտանգվածը հետիոտն է, որ կամ խանութներից մեկի ներսում պիտի անվտանգություն փնտրի, կամ էլ իրեն գցի առաջին իսկ պատահած երթուղային մարդատար տաքսիին, որ դուրս գա բանուկ հատվածից:

Լիլիթ Վարդանյանը ծնվել-մեծացել է Չարենցի փողոցում: Նրանց տան պատուհանները նայում են փողոցին: Մեզ հետ զրուցելիս մի անկյուն է փնտրում, որ իր փոքրիկ տղան չհայտնվի աջ ու ձախ ցրված մեքենաների անիվների տակ: Իրավիճակը բնութագրում է այսպես. «Այս փողոցում բոլորն իրենց դռան առաջ փող են աշխատում: Անկեղծ ասած, մենք էլ ենք ժամանակին կոիլո, պակրիշկա, անտիֆրիզ ու յուղ վաճառել, որ կարողանանք ապրել: Հիմա եղբայրս ու հայրս այլ եկամտի աղբյուր ունեն, բայց հո հարեւանների հացին վայիս չե՞նք լինի, որ բողոքենք: Այս փողոցի, ինչո՞ւ չէ, նաեւ Նար-Դոսի փողոցի բնակիչների ու անցորդների համար հատկապես վտանգավոր են մեքենաների սարսափելի առատությունն ու մայթեզրերի իսպառ բացակայությունը: 90-ականների վերջից այլեւս այստեղ մայթեր չեմ հիշում: Փոխարենը խանութներ են, դրանց դիմաց խիտ շարքերով կանգնած հաճախորդների մեքենաներ, գումարած՝ երկկողմանի երթեւեկություն: Եթե անգամ մեկ-երկու կանգառ պիտի տեղաշարժվեմ, անվտանգության համար պիտի երթուղային նստեմ, այլապես ոչ ոք չի երաշխավորի իմ եւ երեխայիս անվտանգությունը: Հիմա Շենգավիթ թաղամասում եմ ապրում, հարս եմ գնացել այնտեղ, բայց այնտեղի ու Չարենցի փողոցի միջեւ միակ տարբերությունն այն է, որ Շենգավիթում մեքենաների երթեւեկությունն ավելի պակաս է: Թե չէ, ինչ տարբերություն՝ ծայրամաս է, թե՞ կենտրոն», ասում է զրուցակիցս: Նրա վերջին հարցը սիրով փոխանցում ենք Կենտրոն համայնքի Նար-Դոսի եւ Չարենցի փողոցների ու դրանցով երթեւեկող քաղաքացիների անվտանգության պատասխանատուներին: Կցանկանայինք, որ նրանք մայրաքաղաքին ծոնած իրենց սիրո ճառերը բարբառեին հենց այս փողոցների մեջտեղում կանգնած:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը 40 տարեկան է

Հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակն է հավերժացնում Երեւանի հյուսիս-արեւմտյան մասում՝ Ծիծեռնակաբերդ անունը կրող բարձունքում վեր խոյացող հուշահամալիրը, որը կառուցվել է 1965-1967թթ.: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը նվիրված է 1,5 միլիոն հայերի հիշատակին, ովքեր զոհ գնացին թուրքական կառավարության իրագործած 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը:

1960-ական թվականները հայ ժողովրդի պատմության մեջ ամրագրվեցին որպես զարթոնքի, համախմբման, անցյալը վերաարժեւորելու ժամանակաշրջան: Խորհրդային իշխանության օրոք, երբ բացարձակապես մերժված ու անընդունելի էր որեւէ ազգային գաղափարախոսություն, պարտադրված լռության էին մատնված նաեւ Հայոց ցեղասպանության հիշատակումն ու զոհերի հիշատակի ոգեկոչումը: Ի տարբերություն դրա, սփյուռքում յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը նշվում էր որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Հայկական գրեթե բոլոր գաղթօջախներում կազմակերպվում էին բազմաթիվ միջոցառումներ, տարեցտարի նորանոր հուշարձաններ էին վեր խոյանում՝ հավերժացնելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:



«Հավերժության տաճարը» կառուցման ընթացքում

Պատմական իրականության վերականգնման անհրաժեշտությունը 1960-ականներին խորհրդային Հայաստանում եւս հանգեցրեց համաժողովրդական պոռթկման: Տարիների լռությունից հետո հայ ժողովուրդն իր բողոքի ձայնը բարձրացրեց ի լուր աշխարհի, բողոք, որը վերածվեց բազմահազարանոց ցույցերի եւ եղեռնի զոհերի հիշատակի համազգային ոգեկոչման: 1965-ի ապրիլի 24-ին բազմահազարանոց ցույցեր կազմակերպվեցին Երեւանում, ինչպես նաեւ հանրապետության մյուս քաղաքների կենտրոնական հրապարակներում: Եղեռնի 50-ամյակը նշվեց նաեւ աշխարհի շուրջ 20 երկրներում (Լիբանան, Սիրիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ուրուգվայ, Արգենտինա եւ այլուր): Այս տարիներին առավել կարեւորվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի, կոթողի կառուցման անհրաժեշտությունը:

Նախկին հուշահամալիրի կառուցումը հայ ժողովուրդը Հայոց ցեղասպանության զոհերին իր հարգանքի տուրքն մատուցում էր այցելելով Կոմիտասի անվան պանթեոն, իսկ 1967-ից ի վեր մարդկանց բազմահազարանոց թափորը շարժվեց դեպի Ծիծեռնակաբերդի բլուրները:

Հուշահամալիրի կառուցման գործում հատկապես մեծ է Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարուբյանի աշխատանքը, ով ջանք չխնայեց՝ Մոսկվայի հետ իր բանակցություններում հիմնավորելով հուշահամալիրի կառուցման անհրաժեշտությունը: 1960-ի դեկտեմբերի 28-ից դառնալով ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար՝ Յա. Զարուբյանը ձեռնամուխ եղավ համազգային նշանակություն ունեցող մի շարք միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ նվիրված Մեծ եղեռնի 50-ամյակին: Հաղթահարելով տիրող գաղափարախոսության դժվարությունները՝ 1964-ի հուլիսի 16-ին մարխիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծատուր Աղայանը, Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության սեկտորի վարիչ Հովհաննես Ինճիկյանը, ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանը նամակով դիմեցին ՀԿԿ կենտկոմին. նամակում, մասնավորապես խոսվում էր հայ ժողովրդի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի կառուցման անհրաժեշտության մասին: Սրան հաջորդեց արդեն 1964-ի դեկտեմբերի 13-ի՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարուբյանի նամակը ԽՄԿԿ կենտկոմին, որտեղ ներկայացված էր Հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների կոնկրետ ծրագիր. հատկապես կարեւորվում էր «առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթողի» կառուցման անհրաժեշտությունը: Խորհրդային իրականության պայմաններում կուսակցական բարձր պաշտոնյայի համար սա աննախադեպ համարձակ քայլ էր:

1965-ի մարտի 16-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդն ի վերջո որոշում կայացրեց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի կառուցման վերաբերյալ: Որոշման մեջ մասնավորապես ասված էր. «Սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների հիսնամյակի կապակցությամբ, ընդառաջելով հանրապետության աշխատավորների ու հասարակական կազմակերպությունների ցանկություններին, Երեւան քաղաքում կանգնեցնել կոթող՝ ի հավերժացումն 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակի»:

1965-ի ապրիլին հայտարարվեց համամիութենական մրցույթ կոթողի լավագույն նախագծի համար, որին կարող էին մասնակցել նաեւ սփյուռքահայ ճարտարապետներ: Հայտարարության մեջ ասվում էր. «Կոթողը պետք է մարմնավորի սեղծագործ հայ ժողովրդի մարտունակությամբ լի կյանքը, վերարդելու, առաջադիմելու նրա անսպառ կենսունակությունը, նրա ներկան ու պայծառ ապագան՝ ի հավերժացումն իրենց կյանքը նվիրաբերած 1915-ի. Մեծ եղեռնի միլիոնավոր նահատակների անմար հիշատակի»: Մրցույթին կարող էին մասնակցել ինչպես առանձին նախագծողներ, այնպես էլ նախագծող կոլեկտիվներ: Նախագծի հանձնման ժամկետը սահմանվում էր 1965-ի ապրիլի 20-ը՝ ժամը 22-ը. հանձնման վայրը՝ Ճարտարապետների տունը:

Մրցույթին ներկայացվեցին ինչպես տեղացի, այնպես էլ սփյուռքահայ ճարտարապետների հեղինակած 69 նախագծեր՝ «Ժայռ», «Փյունիկ», «Մուշ», «Ղողանջ», «Կռակ», «Կարմիր ծաղիկ» եւ այլ ծածկանուններով: Քվեարկությամբ ընտրվեց «ՀՍՍՌ Դրոշակ» ծածկանունով նախագիծը, որի հեղինակներն էին ճարտարապետներ Արթուր Թարխանյանը եւ Սաշուր Քալաշյանը: Կառույցի վայրն ընտրել էին հեղինակները: Շինարարության անմիջական ղեկավարը շինարար Արտավազդ Օդաբաշյանն էր, կառուցում էր «Երիմշինտեսը»: Հուշահամալիրի կառուցման հիմնական աշխատանքները տեւեցին մեկուկես տարի՝ ավարտվելով 1967-ին.: Մինչեւ 1975-ը բարեկարգվեց հուշահամալիրի ողջ տարածքը, պատրաստվեցին զբոսաշրջիկներ: Ճարտարապետներից յուրաքանչյուրը պարգեւատրվեց 100-ական ռուբլիով: Շինարարության ֆինանսավորումը կազմեց 400 հազար ռուբլի:

Կոթողի բացումը, որը տեղի ունեցավ 1967-ի նոյեմբերի 29-ին, խորհրդային Հայաստանի 47-րդ տարեդարձի օրը, վերածվեց հաղթական, մշակութային խոշոր իրադարձության: Հազարավոր մարդկանց թվում Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու էին եկել խորհրդային Հայաստանի կառավարության ղեկավարները՝ Ա. Քոչինյանը, Ն. Հարությունյանը, Գ. Տեր-Ղազարյանը, Ռ. Խաչատրյանը, Լ. Ղարիբջանյանը, ուրիշներ: Իր բացման խոսքում Քոչինյանը կարեւորեց կոթողի գոյությունը «որպես բողոք ընդդեմ ցեղասպանության որեւէ դրսեւորման»: Սգո երթը հուշահամալիր շարունակվեց մինչեւ ուշ գիշեր:

1988-ի նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին», եւ ապրիլի 24-ը հայտարարեց «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Հուշահամալիրը զբաղեցնում է 4500 քմ տարածք եւ բաղկացած է երեք հիմնական կառույցներից՝ «Հավերժության տաճար», հուշասյուն, հուշապատ:

Մինչ համալիրի հիմնական մաս հասնելը այցելուներն անցնում են 100 մետր երկարությամբ ձգվող բազալտե սրբատաշ քարերից շարված հուշապատի կողքով, որի վրա փորագրված են Օսմանյան կայսրության հայաբնակ մի շարք խոշոր բնակավայրերի անուններ, որոնց հայ բնակչությունը տեղահանվել է, կոտորվել 1915-1922-ին.: 1996-ից հուշապատի հակառակ կողմում ամփոփվում են օտարազգի այն հասարակական, քաղաքական գործիչների, մտավորականների գերեզմաններից վերցված հողով լի սափորները, ովքեր իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ թուրքերի իրագործած հայերի ցեղասպանության:



1967 նոյեմբերի 29. Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը վառում է հավերժական կրակը

Նրանց թվում են Առմին Վեգները, Հեդվիգ Բյուլը, Հենրի Մորգենթաուն, Ֆրանց Վերֆելը, Յոհաննես Լեփսիուսը, Ջեյմս Բրայսը, Անատոլ Ֆրանսը, Ջակոմո Գորինին, Բենեդիկտոս XV-ը, Ֆրիտյոֆ Նանսենը, Ֆայեզ էլ Ղուսեյնը, Կարեն Եփփեն:

Հուշահամալիրի կարեւոր բաղկացուցիչներից է «Վերածնվող Հայաստան» հուշասյունը՝ սլաքաձեւ, 40 մետր բարձրությամբ դեպի երկինք խոյացող մի կոթող, որը կառուցված է ընդարձակ, բազալտով սալարկված ուղղանկյուն հարթակի վրա: Կոթողը երեսպատված է գրանիտե ոլորկ սալերով: Այն խոր ակոսով բաժանված է երկու մասերի՝ մեծ եւ փոքր ընձյուղների՝ արտահայտելով կյանքի շարունակելիությունն ու ազգի վերածնունդը:

Հուշահամալիրի կենտրոնում՝ հարթակի ընդհանուր մակարդակից մեկուկես մետր ներքեւ, երեսուն մետր տրամագիծ ունեցող շրջանաձեւ տարածքի վրա կառուցվել է «Հավերժության տաճարը»՝ դեպի կենտրոն խոնարհված 12 բազալտե հսկա մույթերով (յուրաքանչյուրի բարձրությունը՝ 5 մետր): Դեպի տաճարի սրահը եւ հավերժական ջահն են տանում հարթակից իջնող անսովոր բարձր աստիճանները, որոնք կարծես այցելուին սփոփում են խոնարհվել զոհերի հիշատակի առջեւ: Հուշասրահի խորքից հնչում են Կոմիտասի, Եկմալյանի սգո մեղեդիները, որոնց հետ միահյուսվում է հավերժական կրակը:

Հուշահամալիրը, սակայն, նախագծի իր ամբողջական տեսքի մեջ չէ. «Վերածնվող Հայաստան» հուշասյան ճեղքում չեն կախվել տարբեր չափերի զանգերը (պետք է ձուլվեին Լենինգրադում), որոնց դողանջը կհավերժացներ զոհերի հիշատակը:

1988-1990-ին Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրի հարեւանությամբ տեղադրվեցին խաչքարեր՝ ի հիշատակ Ադրբեջանի Սումգայիթ, Կիրովաբադ (Գանձակ), Բաքու քաղաքներում ադրբեջանական կառավարության կազմակերպած ջարդերին զոհ գնացած հայերի:

Մեծ եղեռնի 80-ամյա տարելիցին հուշահամալիրն ամբողջացվեց թանգարանային համալիրի մասնաճյուղով. 1995-ին բացվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (ճարտարապետներ՝ Ս. Քալաշյան, Լ. Մկրտչյան, Ա. Թարխանյան, քանդակագործ՝ Ֆ. Առաքելյան): Այսօր Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը գործում է որպես գիտահետազոտական կենտրոն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում: 1995-2006-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենն էր Լավրենտի Բարսեղյանը, 2006-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենությունը սանձնել է Հայկ Դեմոյանը:

Հուշահամալիրն ընդգրկված է նաեւ պետական առարկայագրային այցելությունների ցանկում: Հուշահամալիրի տարածքը ներառում է նաեւ Հիշողության պուրակը, որտեղ աշխարհի տարբեր երկրներից ժամանած բարձրաստիճան պաշտոնյաներ ու հյուրեր արձաթափայլ եղեւնիներ են տնկում ի հիշատակ 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի:

1967-ից ի վեր, հուշահամալիրը դարձավ մայրաքաղաք Երեւանի ճարտարապետության անբաժան մասը՝ վերածվելով ուխտատեղիի: Գտնվելով բարձունքի վրա եւ առանձնանալով ընդհանուր բնապատկերից՝ հուշահամալիրը հիանալի ներդաշնակության մեջ է շրջակայքի հետ, իսկ կառույցի պարզ ուրվագծերը փոխանցում են բնաջնջումից վերադարձած ազգի անկոտրում ոգին:

Արդեն 40 տարի ապրիլի 24-ին, հարյուր հազարավոր մարդկանց սգո երթը լուռ շարժվում է դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ամեն տարի հուշահամալիր են այցելում նաեւ հազարավոր օտարերկրյա զբոսաշրջիկներ աշխարհի գրեթե բոլոր երկրներից՝ ծանոթանալու հայ ժողովրդի մեծագույն ողբերգությանը: Այսօր Մեծ եղեռնի հուշահամալիրը համայն հայության գիտակցության մեջ ընկալվում է որպես համազգային սրբավայր, ուր չի դադարում այցելուների հոսքը տարին շուրջբոլոր:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը ՀՀ կառավարության աջակցությամբ 2007-ի նոյեմբերի 27-28-ին կազմակերպում է միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի 40-ամյակին: «Հիշողությունից հիշատակում» խորագիրը կրող գիտաժողովը նվիրված է պատմական հիշողությանը, հիշողության վայրերին, պատմական հուշարձանների ոչնչացմանը եւ այլ հիմնախնդիրներին:

Գիտաժողովում զեկույցներով հանդես կգան հայ եւ օտարազգի գիտնականներ:

Ա. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ,
Ս. ՊԱՐՍԵՂՅԱՆ,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Նախընտրական պայքարում Սաակաշվիլուն՝ եթեր, ընդդիմադիրներին՝ Ռուսթավելու պողոտան

Լրատվամիջոցների ազատ աշխատանքի ապահովումը դարձել է վրաց ընդդիմության հիմնական պահանջը

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին նոյեմբերի 24-ին կառավարության նիստում հայտարարեց, իսկ նոյեմբերի 25-ին ներկայացրեց իր հրաժարականը՝ հունվարի 5-ին արդեն խորհրդարանի հաստատմամբ անցկացվելիք արտահերթ նախագահական ընտրություններում թեկնածություն առաջադրելու նպատակով: Նոյեմբերի 25-ին իր ծրագիրն իրականացրեց նաեւ վրաց ընդդիմությունը՝ երկրում արտակարգ դրությունը հանելուց հետո հավաքվելով հանրահավաքի:

Թբիլիսիի կենտրոնում կիրակի օրը հավաքված ընդդիմադիրները երկրի իշխանություններին 4 պահանջ ներկայացրին՝ չիրականացման դեպքում հանրահավաքները շարունակելու հեռանկարով: Պահանջների շարքում ամենից առաջ հնչեց նախագահական արտահերթ ընտրություններում սեփական թեկնածությունն առաջադրած օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլուն պատկանող (ներկայումս միայն կառավարման կտրվածքով ամերիկյան «News corporation» ընկերությանը հանձնված), ընդդիմության համար գրեթե միակ եթեր ապահոված «Իմեդի» հեռուստաընկերության հեռարձակման վերականգնումը:

Ընդդիմությունը պահանջել է նաեւ ընդհանրապես լրատվամիջոցների վրա ճնշումների վերացում ու լրագրողների նորմալ աշխատանքային պայմանների ապահովում: Բացի այդ, ընդդիմադիր գործիչների կիրակնօրյա հավաքում պահանջել են ազատ արձակել նոյեմբերի 7-ի ցույցի ընթացքում ձերբակալված մասնակիցներին եւ դադարեցնել քաղաքական հետապնդումները:

Թբիլիսիի քաղաքապետարանի թույլատրած ժամանակահատվածում՝ ժամը 14-18-ը ցուցարարները հասել են մինչեւ խորհրդարանի շենք, ապա ցրվել: Օրինակելիությամբ իրենց բաժինն են ցուցադրել նաեւ վրաց ոստիկանները՝ այս անգամ միայն դիսդրդի դերով բավարարվելով: Թերեւ միայն վրացիներին հատուկ ավարտ է ունեցել հանրահավաքը՝ եկեղեցում մոմավառությամբ եւ աղոթքով: Ու չնայած վրաց ընդդիմությունն այնքան էլ միասնական չգտնվեց մեկ թեկնածու առաջադրելու համար, ընդդիմադիր թեկնածուների նպատակը մնում է նույնը՝ Վրաստանը դարձնել խորհրդարանական հանրապետություն:

Երեկ Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում արդեն ավարտվեց նախագահի թեկնածուների հայտերի ընդունումը: Երկու տասնյակից ավելի թեկնածուների շարքում նշենք նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն, որի թեկնածությունն առաջադրել է իշխող «Միասնական ազգային շարժում» կուսակցությունը: Միացյալ ընդդիմությունն առաջարկում է Լեւան Գաչեչիլադզեի թեկնածությունը, լեյբորիստներն առաջադրում են իրենց նախագահ Շալվա Նաթելաշվիլուն, «Նոր աջերը»՝ Դավիթ Գամկրելիձեին:

Օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլու թեկնածության առաջադրման հայտը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել Վրաստանի նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիայի եղբայրը՝ Գեորգի Ժվանիան: Պետական հեղաբերման մեջ մեղադրվող Պատարկացիշվիլին Վրաստան կժամանի միայն, եթե գրանցվի նրա թեկնածությունը: Ընդ որում, Պատարկացիշվիլու հայտարարությունը, թե ընդդիմության միասնական թեկնածուի դեպքում կիանի իր թեկնածությունը, մնում է ուժի մեջ: Ի դեպ, թեկնածուների թվում կա նաեւ ադրբեջանցի, թերեւ անկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ:

Վրաց օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր թեկնածուի համար մինչեւ դեկտեմբերի 5-ը ԿԸՀ պետք է ներկայացվի 50000 ստորագրություն, որից հետո երկօրյա ժամկետում ԿԸՀ-ն կստուգի ստորագրությունների իսկությունն ու սխալները ուղղելու համար երեք օր տրամադրելուց հետո՝ դեկտեմբերի 12-ին կհայտարարի այն մարդկանց անունները, որոնք պաշտոնապես որպես թեկնածու կմասնակցեն նախընտրական քարոզարշավին:

Մինչեւ Վրաստանի նոր նախագահի երդմնառության պահը ներառյալ երկրի նախագահի պարտականությունները կիրականացնի վրաց խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն: Միայն թե արդեն իսկ նախագահական լիազորությունները ժամանակավորապես երկրորդ անգամ ստանձնող Բուրջանաձեն, նախորդ՝ 2003 թվականի նոյեմբերից 2004-ի հունվարին իր «նախագահության» համեմատությամբ, գրեթե ոչ մի իրավունք չունի:

Խոսքը խորհրդարանը, կառավարությունը ցրելու, ուժային նախարարներին փոխելու իրավունքների մասին է, որոնցից Բուրջանաձեն օգտվեց նախորդ անգամ՝ ապահովելով «վարդերի» հեղափոխության իրականացման «ֆորմալ» կողմը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխասյան քաղաքը վաճառվել է 3,8 մլն դոլարով

Տեխասի Սան Անտոնիո քաղաքի 100 կմ հյուսիս ընկած եւ 5,2 հեկտար մակերես զբաղեցնող Ալբերտ քաղաքը ինտերնետային աճուրդում վաճառվել է 3,8 մլն դոլարով:

CNN հեռուստաընկերության տվյալներով, այդ քաղաքում մշտապես բնակվում է ընդամենը մեկ մարդ՝ 47-ամյա Բոբի Քեյվը: Քաղաքի արդեն նախկին տերը դարձած Քեյվի խոսքերով, Ալբերտը հիմնվել է 85 տարի առաջ, բայց աստիճանաբար անկում է ապրել, բնակիչները հեռացել են: Ներկայումս քաղաքում կա 4 շենք՝ մի հին պանդոկ, պարտատան եւ մի բնակելի տուն ընկուզենիներով ու դեղձենիներով:

Քաղաքի նոր սեփականատիրոջ անունը չի հրապարակվում: Հայտնի է միայն, որ նա ապրում է Իտալիայում:

Չինաստանը կգնի միանգամից 160 «Էրբաս»

Ֆրանս-բրիտանական «Էրբաս» ընկերությունը ՉԺՀ-ի հետ ստորագրել է միանգամից 160 օդանավի վաճառքի պայմանագիր: Ընկերության գործադիր տնօրեն Լուի Գալուան Բլումբերգ գործակալության թղթակցին հայտնել է, որ մասնավորապես կվաճառվեն «A 320» տիպի 110 եւ «A 330» տիպի 50 օդանավեր:

Ենթադրվում է, որ գործարքի ընդհանուր արժեքը 17 մլրդ դոլար է: «Ուոլ սթրիթ ջորնալի» տվյալներով, գործարքը գնահատվում է 14,8 միլիարդ:

Օրերս պայմանագրի կնքման մասին հայտարարվել էր Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի Պեկին կատարած պաշտոնական այցի ժամանակ: Մանրամասնությունները չեն հրապարակվում:

Միաժամանակ հաղորդվում է, որ ֆրանսիական «Արեւ» ընկերությունը ՉԺՀ ազգային ատոմային կորպորացիայի հետ համաձայնագիր է ստորագրել երրորդ սերնդի երկու միջուկային ռեակտորների մատակարարման շուրջը: «Ֆիգարո» թերթի տվյալներով, գործարքի գումարը մոտ 8 մլրդ եվրո է (11,9 մլրդ դոլար):

Դա ռեկորդային գումար է Ֆրանսիայի քաղաքացիական ատոմային արդյունաբերության համար:

2005-ին եւ 2006-ին «Էրբասը» հաղթել էր ՉԺՀ-ին 150-ական օդանավի մատակարարման պայմանագրերի կնքման գործում, բայց այդ մատակարարումները ընկերությանը չէին փրկել ճգնաժամից: 2007-ին «Էրբասը» հայտարարեց, որ մտադիր է ծախսերի կրճատման ծրագրի շրջանակներում ազատել 10 հազար աշխատակիցների: Դոլարի նկատմամբ եվրոյի ամրապնդումը էլ ավելի կմեծացներ ընկերության վնասները: Այնպես որ վերջին գործարքը մասամբ կարելի է փրկարար համարել:

ՄԵՐՅԱՎՈՐՄԲԵՎԵԼՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏ

Աննապոլիսի հանդիպմանը կմասնակցեն հինգ տասնյակ երկրներ

Սա կարգավորման սկիզբն է միայն

Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող Աննապոլիս քաղաքում այսօր բացվող միջազգային կոնֆերանսը նվիրված է մերձավորարեւելյան հակամարտության կարգավորմանը: BBC-ի վերջին տվյալների համաձայն, հանդիպմանը մասնակցելու համաձայնություն են տվել հինգ տասնյակ (մեծ մասամբ՝ արաբական) պետություններ:

Կոնֆերանսի նախապատրաստման շրջանակներում երեկ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը եւ նախագահ Ջորջ Բուշը առանձնազրույցներ են ունեցել Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտի եւ Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի հետ, որոնցից համաձայնեցնեն կոնֆերանսին ներկայացվելիք համատեղ փաստաթուղթը:

ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչների խոսքերով, համատեղ փաստաթուղթը բանակցությունների վերջնական նպատակը չէ, եւ Աննապոլիսի կոնֆերանսը Մերձավոր Արեւելքի խաղաղությանն ուղղված փորձերի շարքի սկիզբն է միայն:

Սիրիայի ներկայացուցիչները նախապես իրենց մասնակցությունը պայմանավորել էին վիճելի Գոլանի բարձունքների հարցի քննարկմամբ: Ի վերջո Իսրայելը համաձայնել էր Գոլանի կարգավիճակի հարցն ընդգրկել օրակարգում: Երեկ հայտնի դարձավ, որ Սիրիայի պատվիրակությունը կգլխավորի արտգործնախարար Ֆեյսալ Մեքդադը:

Կոնֆերանսի գլխավոր նպատակը Իսրայելի եւ պաղեստինցիների հաշտությանը եւ Պաղեստինի պետության ստեղծմանը նվիրված իսրայելա-պաղեստինյան բանակցությունների ծավալումն է:

Արաբական աշխարհի ազդեցիկ պետություններից մեկը՝ Սաուդյան Արաբիան, սկզբնապես հակված չէր մասնակցելու կոնֆերանսին եւ պահանջում էր պաղեստինցիների հետ կապված սկզբունքային հարցերի քննարկում: Բայց ուրբաթ օրը սաուդցիները հայտարարեցին, որ իրենց պատվիրակությունը կմեկնի Աննապոլիս:

Կոնֆերանսին չեն մասնակցի Իրանը եւ Գազայի հատվածում իշխող պաղեստինյան «Համաս» արմատական խմբավորումը: Ի դեպ, Իրանը վերջին օրերին արաբական պետություններին հորդորել էր բոյկոտել Աննապոլիսի հանդիպումը:

Խժդժություններ Փարիզի արվարձանում

Փարիզի հյուսիսում գտնվող Վիլիե լը Բել արվարձանում երեկ գիշեր տեղի են ունեցել զանգվածային անկարգություններ, որոնք սկսվել են ճանապարհային վթարից երկու դեռահասների զոհվելուց հետո: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ գողացված մոտոցիկլին նստած երկու դեռահասները բախվել են ոստիկանական ավտոմեքենային եւ զոհվել: Վիլիե լը Բելում, որտեղ սոցիալական վիճակն այնքան էլ բարվոք չէ, միջադեպը ներկայացվել է որպես ոստիկանների հետապնդման հետեւանք:

Տեղացի բազմաթիվ երիտասարդներ հարձակվել են ոստիկանական տեղամասի վրա եւ հրկիզել: Ոստիկանության կոմիսարներից մեկը ծեծի է ենթարկվել: Հրկիզվել է նաեւ հարեւան փոքր քաղաքի ոստիկանական տեղամասը:

Իշխանությունների ներկայացուցիչների խոսքերով, վանդալների փոքր խմբերը թալանում եւ ավերում են խանութները: Վիրավորվել են յոթ ոստիկաններ եւ բռնկված ավտոնակներից մեկում աշխատող մի հրշեջ: Խժդժությունների մասնակիցները նաեւ հրկիզել են ավտոմեքենաներ եւ աղբարկղեր:

Ֆրանսպրեսի տվյալներով, ընդհանուր առմամբ հրկիզվել են երկու գարաժ, բենզալցման մի կայան, երկու խանութ եւ 21 ավտոմեքենա: Ոստիկանությունը հաղորդել է 7 ձերբակալության մասին:

Փարիզից եւ հարեւան դեպարտամենտներից Վիլիե լը Բել են ուղարկվել ոստիկանության հավելյալ ուժեր: Իշխանությունները փորձում են թույլ չտալ նախանցյալ տարվա դեպքերի կրկնությունը, երբ ոստիկաններից փախած երկու դեռահասների էլեկտրահարությունից հետո զանգվածային անկարգություններ էին ծավալվել ամբողջ Ֆրանսիայում:

Պակիստան է վերադարձել նախկին վարչապետ Նավազ Շարիֆը

Սաուդյան Արաբիայում 8 տարվա տարագրությունից հետո Պակիստան է վերադարձել երկրի նախկին վարչապետ Նավազ Շարիֆը: Լահորի օդանավակայանում նրան դիմավորել են բյուրավոր խանդավառ համակիրներ:

BBC-ի տեղեկությունների համաձայն, Պակիստանի ներկայիս իշխանությունները Շարիֆին կթույլատրեն հայրենիքում մնալ, քանի որ մի շարք կարեւոր հարցերում նա «փոխըմբռնման» է հասել նախագահ Փերվեզ Մուշարաֆի հետ:

Սեպտեմբերին Շարիֆն արդեն փորձել էր վերադառնալ հայրենիք, բայց իշխանությունների կարգադրությամբ անմիջապես արտաքսվել էր երկրից:

Ութ տարի առաջ հենց Մուշարաֆի հրամանով պաշտոնանկ արված Շարիֆը մշտապես է մասնակցել հունվարի 8-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին: Նա դեռ ժամանակ ունի համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու տեղական ընտրական հանձնաժողովին:

Ավելի վաղ՝ հոկտեմբերին Պակիստան էր վերադարձել եւս մեկ նախկին վարչապետ՝ Բենազիր Բհուտոն, որը նույնպես երկար ժամանակ աքսորված ապրել էր տարագրության մեջ: Երկու նախկին վարչապետներն էլ դեմ են Մուշարաֆի վարչակարգին, բայց ձեռնպահ են մնում ուղղակի քննադատությունից:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Որպեսզի մեր հաջորդներին դարուփոս չթողնենք

Վերջերս «Իսկական իրավունքը» թերթում (թիւ 78, 23-26 նոյեմբերի 2007 թ.) կարդացի Նիկոլայ Ծասուրյանի հետ հարցազրույցը: Վարդան Աճեմյանի անվան Գյումրու թատրոնի գեղարվեստական ղեկավար, դոկտոր Ծասուրյանը, որին ներկայացնելու հարկ բնավ չկա, այս հարցազրույցում մտորում է ոչ միայն իր, իր ղեկավարած թատրոնի, այլեւ Հայաստանի թատերական կյանքի այսօրվա վիճակի մասին: Շատ ու շատ հարցերում համաձայն եմ նրա հետ, ինքս էլ շատ կարող եմ ավելացնել: Ծասուրյանին համարելով խոհեմ ու լուրջ արվեստագետ, հայ բեմի համար մեծ գործ արած մարդ, պարզապես զարմացա նրա մեկ նախադասությունը կարդալով. «Էդ «Նունե Եսայան դրոդաֆնն» է, ինչ զահրումար է, լավ է անում, գիտենք, որ իր ամուսնու համար է անում, որին կարող էր որդեգրել, նոր ամուսնանալ...»:

Ընդունում եմ Նիկոլայ Ծասուրյանի ճաշակի չափանիշները, հավատում եմ, որ Պարոնյանի անվան թատրոնում ներկայացված «Երկու ընկեր՝ չհաշված կյանքը» շատ վատն է եղել: Ինքս հրավեր ստացել եմ ներկայացումը դիտելու համար, բայց չկարողացա գնալ: Եթե անգամ դահլիճում եղած լինեի, եթե ներկայացումը դասական ու փուչ բան լիներ (ինչպես այսօր ներկայացվող շատ ու շատ բեմադրություններ)՝ պարզապես չէի խոսի դրա մասին, խոսքի, գրի անարժան բան կհամարեի ու կանցնեի (ինչպես անում ենք շատ հաճախ): Չէ՞ որ կա պարզ մի տրամաբանություն. եթե ինքդ դադարում ես որեւէ գիր, ներկայացում, կինոնկար, ցուցահանդես՝ հավելյալ գովազդ է տրվում: Մեր ժամանակի մտքի այս խոսքերը, հավատում եմ, որ ծանոթ է հարգարժան բարեկամիս՝ Նիկոլայ Ծասուրյանին:

Բայց արվեստը՝ գրականությունը, թատրոնը, նկարչությունը այլ բան է, անձնական կյանքն՝ ուրիշ բան:

1990-ական թվականների առաջին տարիներին ես մի քանի անգամ հիացմունքով գրել եմ Նունե Եսայան երգչուհու մասին, ռադիոհաղորդումներ կազմակերպել: Այո, այդ ժամանակ Նունե Եսայանն, իսկապես, լավ գործ էր անում հայ երգի մատուցման համար, հասել էր վարպետության, որը բերում էին շատ ու շատ մասնագետներ: Բայց կատարվեց անսպասելին:

Իր տեղը հասատած երգչուհին սկսեց տարօրինակ բաներ անել, հայտնվել շատ ու շատ փխրուն, ինքնությանը չդիմացող իրավիճակներում, որոնք այսօր չգիտես ինչու «նախագծեր» են կոչվում: Թողնենք այս բառի ծիծաղելի վիճակը, որովհետեւ արվեստի գործը իր արժեքը չէր կորցնի (եթե, իսկապես, արժեք ունի), եթե կինոնկարը կոչվեր կինոնկար, բեմադրությունը՝ բեմադրություն, գիրը՝ գիր: Նունե Եսայանն ուներ իր տեղը (հիմա էլ ունի) եւ բնավ հարկ չկար վանգել իրեն: Եթե Հայաստանում ապրող 4 միլիոն «ասողները», «սուպեր-սթարները», «հանճարեղ գրողները» դրա համար ամեն ջանք գործադրում են, չհասկանալով, չգիտակցելով, ապա Նունե Եսայանը դրա կարիքը, կարծում ենք, չպիտի ունենար: Եթե այդ «ասողներն» ու «հանճարեղները» ճանաչման արժանանալու համար իրենց խիստ անձնական կյանքի մանրամասներն են պատմում, եթե իրեն գրող-լրագրող ներկայացնող ինչ-որ մեկը հոչակ ձեռք բերելու համար հեռուստաեթերից հայտարարում էր, որ Պարույր Սեւակը ՊԱԿ-ի գործակալ է եղել, ես իրենց հասկանում եմ. ցանկանում են տեղ ունենալ մշակույթի մեջ, գրականության էջերում, ազդագրերի վրա: Նունե Եսայան, դու դրա կարիքը չունեիր:

Մեկ-երկու տարի առաջ «Ազգը» սիրահոժար տպագրում էր իմ հեղինակած «Դարուփոսից» հատվածներ (2004-ին լույս տեսավ գիրքը): Մեր բոլորի ջանքերով մեր հոգեւոր դաշտը դարձավ իսկական դարուփոս, ուր ոչ մի բան իր տեղում չէ, ուր ամեն ինչ այնքան անհեթեթ ու ծիծաղելի է, որ մարդու լացն է գալիս: Ամեն մարդ ինքն իրեն խաղախական գործիչ, երկրի նախագահ, նախարար, վարչապետ է համարում, փառաբանում կամ նզովում է ուրիշին: Եվ հոշոտման կիրքը կոպ է տալիս մեծամասնությանը:

Ուզում եմ պատմական երկու պարզ իրողություն հիշեցնել:

Հռոմի նման հզոր կայսրությունը ավերակվեց ոչ թե այն պատճառով, որ չէր կարողանում պաշտպանել իր սահմանները (Քրիստոսի ծննդից հետո մի քանի դար այս կայսրությունը դեռ ամենահզոր բանակն ուներ): Խորհրդային Միությունը կոչված պետությունը փլատակ դարձավ ոչ թե այն պատճառով, որ զինված հզոր ուժեր չուներ: Չէ: Այս երկու պետությունն էլ (իհարկե, տարբեր ժամանակներում) կործանվեցին այն պատճառով, որ նրանց բնակիչները ծույլ էին իրենց հոգու եւ ոգու մարզման ասպարեզում: Հոգու եւ ոգու պահպանման ոլորտում այս ծուլությունը հարիր է նաեւ տնտեսապես վատ պայմաններում ապրող ժողովուրդների համար, երբ մեկը մյուսին չի սիրում, երբ սնապարծ է, երբ... Արժե նորից կարդալ Մովսես Խորենացու «Ողբը», բայց կարդալ ուժեղանալու համար: Կարդալ, որպեսզի հաջորդ սերունդներին հզոր ռեժիսորներ, երգչուհիներ, գրողներ, նկարիչներ ավանդենք: Կարդալ, որ մեր հոգեւոր դաշտը դարուփոս չդառնա:

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԵՆ

«Էմպրեսիա» նախագիծն իրականացավ աշխարհաճանաչողության ու ինքնամատուցման յուրօրինակ ճանապարհով

Անցյալ երեք ամիսներին «Դար» հիմնադրամն իրականություն դարձրեց «Էմպրեսիա» նախագիծը, որը նկարչուհի Սվետլանա Հակոբյանի նկարների ցուցադրությունն ու «Կադանս» կվինտետի ելույթներն էին Հայաստանի մի քանի շրջաններում, ինչպես եւ Փարիզում, Լոնդոնում եւ Բրյուսելում: «Մեր նախագծի եւ շրջագայությունների նպատակն էր մեր մշակույթը հասանելի դարձնել մարզերում եւ արտերկրում: Թող մեզ ճանաչի աշխարհը, եւ մենք աշխարհը ճանաչենք», այսպես ներկայացրեց նախագծի գաղափարը «Դար» հիմնադրամի ղեկավար, նկարչուհի Ս. Հակոբյանը: Նա նշեց, որ «Կադանսը» ներկայացնում էր երկու մասանոց ծրագիր, որոնց առաջին մասը ներկայացնում է հայկական երաժշտարվեստը, երկրորդը՝ համաշխարհային: Այն, ինչ ներկայացրեց «Կադանսը» նախագծի շրջանակներում կիրառարակվի կրկնասալիկների տեսքով եւ թերեւս «Կադանսի» երկրպագուների համար լավ նվեր կհամարվի:

Իսկ առայժմ, կիրակի օրը «Էմպրեսիան» եզրափակիչ համերգով ավարտեց իր առաքելությունը եւ վաստակեց Արամ Խաչատրյանի համերգասրահ ժամանած հասարակության ծափերը: «Երբ ընկերներս ինձ ներկայացրին այս նախագիծը, զարմացա, հետո ուրախացա, այնուհետեւ՝ ապշեցի, նշեց ծրագրի մասնակիցներից Արթուր Բախչամյանը, որ վարում էր եզրափակիչ երեկոն: Զարմացա, որովհետեւ մեզանում տարածված են երաժշտական, մշակութային, բայց միշտ՝ կոմերցիոն նախագծերը»: Նա ասաց, որ այս նախագիծը կոմերցիոն նպատակ չի հետապնդել: Սկսելով Ստեփանակերտից, շարունակվելով Նոր Հաճընում, ապա եւ՝ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում ու Վանաձորում՝ ապա տեղափոխվել է Փարիզ, Լոնդոն եւ Բրյուսել: Թե ինչ անմոռանալի հիշողություններ են ամբարել նախագծի իրականացնողները, կարելի է ենթադրել, մանավանդ, որ հաղորդավարը երանությամբ էր հիշում այցելությունների արձագանքներն ու ջերմ հյուրընկալությունը՝ ուր էլ որ կանգ են առել եւ ներկայացրել իրենց արվեստը Սվետլանա Հակոբյանն ու «Կադանս» կվինտետը: Իսկ երեկ ծափերն արդեն տեղացի հանդիսատեսինն էին, որին հիացրեց եւ հաստատես ոգեւորեց համերգի վերջում հնչած տանգոների շարքը, դաշնակահար Արմեն Բաբախանյանի ղեկավարությամբ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Մեր մասը խառն է ամեն տեղ

Ռուսական մամուլում հանգամանորեն քննարկվում են «Պատերազմ եւ խաղաղություն» վեպի վերջին էկրանավորման բոլոր «ծուռ եւ շիտակ» կողմերը: Կինոնկարի ստեղծման աշխատանքներին մասնակցել են եվրոպական յոթ երկրներ: Օբյեկտիվորեն դժվարին, եթե չասենք անլուծելի խնդիր է մի երկրի պատմությունը վերարտադրել ուրիշ երկրի, իսկ տվյալ դեպքում մի քանիսի, պատկերացումներով: Ռուս մասնագետները մեծ թվով սխալներ, վրիպումներ, աղավաղումներ, թյուրընկալումներ են տեսնում նոր աշխատանքում՝ կապված պատմական իրողությունների, զգեստների, հոգեբանության հետ եւ այլն:

Սակայն ամենազվարճալին, պարզվում է... հայկական հետքն է: Պարահանդեսի տեսարանում Նատաշա Ռոստովան Անդրեյ Բոլկոնսկու հետ «ճախրում է» մի վալսի ներքո, որի հեղինակն է 20-րդ դարի մեծագույն կոմպոզիտորներից մեկը... Արամ Խաչատրյանը: Երեւի գլխի ընկած, որ խոսքը վերաբերում է այն չքնաղ երաժշտությանը, որ մեր ականավոր հայրենակիցը երկնել է 1941 թվականին Լերմոնտովի «Դիմակահանդեսի» համար:

Մեզ ինչ է մնում, հուսալ, եթե Խաչատրյանի վալսը մխրճվել է դարերի խորքը, ինչը կխանգարի նրան հնչելու նաեւ դարեր հետո...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի գրադարանը վերաբացվել է

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան գրադարանը օրեր առաջ վերաբացվել է՝ Լիսաբոնի Գ. Գյուլբենկյան հիմնադրամի ու Լոնդոնի Սբ Սարգիս եկեղեցու հոգաբարձուների խորհրդի հովանավորությամբ մի քանի տարի հիմնովին վերանորոգվելուց հետո:

Պատրիարքարանում հարուստ գրադարան ունենալու մասին երազել էր 1921-1929 թվականներին Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե Դուրյանը, որը սակայն իր մահկանացուն կնքեց գրադարանի հիմնարկեքից առաջ, 1929-ին: Գրադարանը բացվել է 1932 թվականին, Թորգոմ I պատրիարքի օրոք ու բազում նվիրատուների շնորհիվ տարեցտարի դարձել է եզակի հավաքածուներով աչքի ընկնող գրադարան: Հայատառ գրքերի կողքին դրվել են եվրոպական եւ արեւելյան լեզուներով մի քանի հազար գրքեր, նաեւ 18-20-րդ դարերի ամսագրեր, թերթեր, հայագիտական ուսումնասիրություններ: Հայկական թերթերի իր հավաքածուով այս գրադարանը երրորդն է՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության եւ Հայաստանի ազգային գրադարանից հետո:

Գրադարանի վերաբացմանը ներկա են եղել Փոլ Գյուլբենկյանը եւ Մարտին Եսայանը, ինչպես նաեւ բազմաթիվ հրավիրյալներ, որոնց ողջունել է Երուսաղեմի պատրիարքարանի լուսարարապետ Նորհան արք. Մանուկյանը: Մարտին Եսայանը հանդես է եկել Գալուստ Գյուլբենկյանի կյանքի եւ գործունեության մասին ելույթով, ընդգծելով Երուսաղեմի պատրիարքարանի հետ նրա ջերմ կապերն ու բարեգործական ծրագրերը: Գրադարանի տնօրեն հայր Նորայրն իր հերթին խոսել է գրադարանի հետագա զարգացման հեռանկարների մասին: Երուսաղեմի պատրիարք Թորգոմ սրբազանը բարեգործներին հանձնել է պատրիարքարանի պատվո էմբլեմներ:

Ռ. Պ.

ԵՅՈՒ ՅՈՐՔ

«Մոռացված հաց» գրքի շնորհանդես

ՀԲԸՄ-ի «Արարատ» եռամսյակային հանդեսն ու «Գրիգոր եւ Կլարա Զոհրաբ» տեղեկատվական կենտրոնը միասնաբար Նյու Յորքի Սբ. Վարդան մայր տաճարի դահլիճում կազմակերպել են Դավիթ Խրտյանի խմբագրած «Մոռացված հաց: Ամերիկահայ գրողների առաջին սերունդը» խորագրով գրքի շնորհանդեսը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեթթյոր» շաբաթաթերթը:

Գրքի հրատարակությունը հնարավոր է դարձել ՀԲԸՄ-ի հատկացրած նյութական օժանդակության շնորհիվ: «Հակառակ, որ մենք այստեղ՝ Ամերիկայում համայնք ենք դարձել, մեզ որպես օտար տարր են ընդունել ամերիկացիները: Մենք պետք է մեզ դրսեւորենք: Մենք այժմ հպարտ ենք, որ կարողացանք մեր տեղն զբաղեցնել այս երկրում: Այս գրքով ցանկացել եմ ավանդույթի սկիզբը դնել: Ամերիկահայ գրականությունը շարունակվում է եւ հետագայում պետք է գրականությամբ զբաղվող մյուս սերունդներին էլ ներկայացնել», նշել է հեղինակը, որի գրքում ընդգրկված են գրողներ Նենսի Գրիգորյանը, Ալան Սեմերջյանը, Արթուր Ներսեսյանը, Հրակ Վարդանյանը, Քրիս Ադամյանը, Մոնիկա Գյունյանը եւ Պատրիսիա Սարաֆյանը:

Դավիթ Խրտյանը ճանաչված բանաստեղծ, խմբագիր եւ հուշագրող է: Նրա գրքերի թվում են «Հարգանքի տուրք Ադամյանին», «Ընկերներ: Հուշագրություն», «Նամակներ հորս», «Ճանապարհը տնից» եւ «Ոսկյա ապարանջանը»: Խմբագրել է «Արարատ» եռամսյան, «Ֆորումուդ» եւ «Ստոմինդեր» էթնիկական գրականության հանդեսները:

Հ. Ծ.

Ծանոթ եւ անծանոթ մրցակիցներ

Հայաստանի եւ Թուրքիայի հավաքականներն ընտրական միեւնույն խմբում

Կիրակի հարավաֆրիկյան Դուրբան քաղաքում կայացավ ֆուտբոլի աշխարհի 2010-ի առաջնության ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Հայաստանի հավաքականը, որ մինչեւ վիճակահանությունը 5-րդ զամբյուղում էր, ընդգրկվեց ընտրական 5-րդ խմբում: Մեր հավաքականի մրցակիցներն են Իսպանիայի, Թուրքիայի, Բելգիայի, Բոսնիայի եւ Էստոնիայի ընտրանիները: Միանգամից ասենք, որ վիճակահանությունն այնքան էլ բարեհաճ չգտնվեց մեր հավաքականի հանդեմ: Նախ, 6-րդ զամբյուղում ընդգրկված հավաքականներից մեզ բաժին հասավ թերեւս ուժեղագույնը՝ Էստոնիայի ընտրանին: Մինչդեռ այս զամբյուղում էին Մալթայի, Լյուքսեմբուրգի, Անդորրայի, Ֆարերների, Սան Մարինոյի հավաքականները, որոնցից մեկն ավելի նախընտրելի էր որպես մեր ֆուտբոլիստների մրցակից: 1-ին եւ 2-րդ զամբյուղներից մեզ բաժին ընկան Եվրոպայի առաջնության եզրափակիչի ուղեգրեր նվաճած Իսպանիայի եւ Թուրքիայի հավաքականները, որոնք էլ անկասկած, խմբում ուղեգրերի համար պայքարում հաղթողի գլխավոր հավակնորդներն են: 2-րդ զամբյուղից թերեւս ավելի նախընտրելի կլիներ Իսրայելը կամ Բուլղարիան: Մեր

ֆուտբոլիստներին կրկին հարկ կլինի մրցել Բելգիայի հավաքականի հետ, որն ամենաանհարմար մրցակիցներից մեկն է ՀՀ հավաքականի համար: Նախընտրելի կլիներ 3-րդ զամբյուղից հանդիպել իռլանդացիների կամ ավեյցարացիների հետ:

Ընդհանուր առմամբ ընտրական 5-րդ խումբը բավական դժվարին է՝ հաշվի առնելով մեր հավաքականի ներուժը: Եվ եթե ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը կասարի խոսքումը եւ հավաքականի առջեւ խնդիր դնի պայքարել աշխարհի առաջնության ուղեգրերի համար, ապա մեր ֆուտբոլիստների համար առաջադրանքը կասարելը չափազանց բարդ կլինի: Սակայն մյուս կողմից էլ իրոք ժամանակն է բարձր պահանջներ դնելու մեր ֆուտբոլիստների առջեւ, որպեսզի նրանք պասասխանասվություն կրեն եւ ջանքեր գործադրեն առաջադրանքը կասարելու համար:

Ֆուտբոլասերներին տեղեկացնենք, որ ընտրական մրցաշարի մասնակիցներից Իսպանիայի, Բելգիայի եւ Էստոնիայի հավաքականների հետ մեր ընտրանին նախկինում հանդիպել է: Իսպանացիներն ու բելգիացիները մինչ օրս ամենաանհարմար մրցակիցներն են մեզ համար: Երկու անգամ այս հավաքականների հետ մեր ընտրանին ընդգրկվել է ընտրական միեւնույն խմբում եւ կայացած բոլոր չորս խաղերում էլ պարտվել է՝ չկարողանալով գեթ մեկ գնդակ խփել: Ընդ որում, 1996-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Իսպանիան, Բելգիան ու Հայաստանը միեւնույն խմբում էին: Մեր ֆուտբոլիստները երկու խաղերում էլ զիջեցին Բելգիայի (0-2, 0-2) եւ Իսպանիայի (0-2, 0-1) հավաքականներին:

2004-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում կրկին հասվեցին հայ եւ իսպանացի ֆուտբոլիստների ճանապարհները: 2003-ի ապրիլի 2-ին ՀՀ հավաքականը Միխայ Սոյկիցայի գլխավորությամբ հյուրընկալվելիս մոտ 70 րոպե հաջողությամբ դիմագրավեց իսպանացիների գրոհներին, սակայն ի վերջո տեղի տվեց ու պարտվեց 0-3 հաշվով: Իսկ ընտրական մրցաշարի ավարտական խաղում, Երեւանում իսպանացիները վարպետության իսկական դաս տվեցին հայ ֆուտբոլիստներին՝ ջախջախելով 4-0 հաշվով:

Բելգիացիների հետ էլ Եվրո-2008-ի ընտրական մրցաշարում մեր հավաքականն անհաջողության մատնվեց: Առաջին իսկ խաղում, սեփական հարկի տակ մեր ֆուտբոլիստները զիջեցին 0-1 հաշվով, իսկ հյուրընկալվելիս 3 անպասասխան գնդակ ընդունեցին սեփական դարպասը:

Էստոնացիների հետ մեր հավաքականը նախկինում ընկերական երկու խաղ է անցկացրել: 1998-ի նոյեմբերի 21-ին Աբովյանում մեր ֆուտբոլիստները հաղթել են 2-1 հաշվով, իսկ մեկ տարի անց էստոնացիները սեփական հարկի տակ ռեւանշի են հասել (2-0):

Մասնագետների համընդհանուր կարծիքով ընտրական խմբերից ամենաթույլը 2-րդն է: Կարծում ենք, ռուսների բախտը բերել է՝ ընդգրկվելով 4-րդ խմբում: Կրկին միեւնույն խմբում են շվեդներն ու դանիացիները, անգլիացիներն ու խորվաթները: Ինչ խոսք, Անգլիայի հավաքականը հնարավորություն է սացել ռեւանշի հասնելու խորվաթների նկասմամբ, որոնք նրանց զրկեցին Եվրո-2008-ի եզրափակիչի ուղեգրերից:

1-ին խումբ. Պորտուգալիա, Շվեդիա, Դանիա, Հունգարիա, Ալբանիա, Մալթա:

2-րդ խումբ. Հունասան, Իսրայել, Շվեյցարիա, Մոլդովա, Լասվիա, Լյուքսեմբուրգ:

3-րդ խումբ. Չեխիա, Լեհասան, Հս. Իռլանդիա, Սլովակիա, Սլովենիա, Սան Մարինո:

4-րդ խումբ. Գերմանիա, Ռուսասան, Ֆինլանդիա, Ուելս, Ադրբեջան, Լիխտենշտեյն:

5-րդ խումբ. Իսպանիա, Թուրքիա, Բելգիա, Բոսնիա, Հայաստան, Էստոնիա:

6-րդ խումբ. Խորվաթիա, Անգլիա, Ուկրաինա, Բելառուս, Ղազախսասան, Անդորրա:

7-րդ խումբ. Ֆրանսիա, Ռումինիա, Սերբիա, Լիտվա, Ավսարիա, Ֆարերներ:

8-րդ խումբ. Իտալիա, Բուլղարիա, Իռլանդիա, Կիպրոս, Վրասան, Չեռնոգորիա:

9-րդ խումբ. Հոլանդիա, Շոտլանդիա, Նորվեգիա, Մակեդոնիա, Իսլանդիա:

Հիշեցնենք, որ եզրափակիչի ուղեգիր կնվաճեն խմբերի հաղթողները: Մյուս չորս ուղեգրերը անցումային խաղերում կվիճարկեն երկրորդ տեղ գրաված հավաքականների մեջ լավագույն արդյունքի հասած ութ ընտրանիները:

Ավետիք Գրիգորյանը պահպանեց դիրքերը

Անթալիայում շարունակվող շախմատի աշխարհի պասանեկան առաջնությունում տարիքային որոշ խմբերում հաջող ելույթներ են ունենում հայ շախմատիստները: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Ավետիք Գրիգորյանը 7-8-րդ տուրերում 1,5 միավոր վասակեց՝ հաղթելով իտալացի Դանիել Վոկասուրոյին եւ ոչ-ոքի խաղալով լասվիացի Վիսալիս Սամոլինսի հետ: Նա 6,5 միավորով 2-րդ տեղում է եւ ընդամենը կես միավոր է զիջում ռուսասանցի Իվան Պոպովին:

6 միավոր ունի Հովիկ Հայրապետյանը, որը հաղթեց Ալֆրեդո Պենալին եւ Վոյթեր Սոլիմանին: Նրանից կես միավորով հետ է մնում Հրանտ Մելիքյանը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում 6 միավոր ունի Ռոբերտ Հովհաննիսյանը, որը տարավ մեկ հաղթանակ եւ մեկ պարտիայում պարտվեց: Դավիթ Գետրգյանի համար հաջող էին երկու տուրը, որոնցում նա հաղթանակներ տարավ եւ միավորների թիվը հասցրեց 5,5-ի: Այսպես առաջատարը ռումինացի Քրիսթիան Խիրիլան է, որն ունի 7 միավոր:

Առաջատարների խմբում է նաեւ մինչեւ 14 տարեկանների մրցաշարի մասնակից Սամվել Տեր-Սահակյանը: Նա հերթական պարտիաներն ավարտեց ոչ-ոքի եւ վասակեց 6 միավոր: 5-ական միավոր ունեն Ռոբերտ Աղասարյանն ու Վահե Բաղդասարյանը: Առաջատարը հնդիկ շախմատիստ Գուջրաթի Վիդիթն է, որի հաշվին գրանցված է 7 միավոր: Իսկ ահա մինչեւ 12 տարեկանների մրցաշարում մեր պասվիրակներն այնքան էլ հաջող չեն խաղում: 5 միավոր է վասակել Հովհաննես Գաբուզյանը, 4,5՝ Նորայր Թորոսյանը: Տարիքային այս խմբի առաջատարն ադրբեջանցի Ոլվի Բաջարանին է, որն 8 տուրերում միայն կես միավոր է կորցրել: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում Տիգրան Հարությունյանը վասակել է 5,5 միավոր: Նրանից կես միավոր պակաս է վասակել Մանուել Պետրոսյանը, իսկ Հրանտ Մեժլումյանն ունի 3,5 միավոր:

Հայաստանը ներկայացնող 5 շախմատիստուհիներից լավագույն արդյունքն ունի Լուսինե Թորոսյանը, որը 8 հնարավորից վասակել է 4,5 միավոր: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում նա տարավ մեկ հաղթանակ, մեկ պարտիայում էլ պարտվեց: Առաջատարը վրաց միջազգային վարպետ Նազի Պաիկիձեն է, որն ունի 7 միավոր: 4-ական միավոր ունեն Նունե Դարբինյանը (մինչեւ 18 s.) եւ Սվետլանա Միրզաբեկյանը (մինչեւ 12 s.): Հերթական տուրը նրանց համար անհաջող էին: Նունեն վասակեց ընդամենը կես միավոր, իսկ Սվետլանան երկու պարտիաներում էլ զիջեց մրցակցուհիներին: Մինչեւ 18 տարեկանների մրցավեճում լավագույն արդյունքն ունի չեխ Կատերինա Նեմցովան (7 միավոր), իսկ 12 տարեկանների մրցաշարի առաջատարը Իսրայելը ներկայացնող Մարսել Եֆրոինսկին է, որը միակ մասնակիցն է, որ դեռեւ միավոր չի կորցրել: 3,5 միավոր է վասակել Արայակ Կարխանյանը (մինչեւ 16 s.), իսկ ամենակրսսեր մասնակից Մարիամ Մանուկյանն իր օգտին 2,5 միավոր է գրանցել:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայ կարատեիստներից տպավորված է լեհ վարպետը

Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի անդամ «Կենտրոն» ազգային ավանդական կարատե դո ֆեդերացիայի տնօրենության հրավերով Հայաստանում է եվրոպական ավանդական կարատե դո ֆեդերացիայի փոխնախագահ, համաշխարհային ավանդական կարատեի խորհրդի անդամ, Լեհասանի ավանդական կարատեի նախագահ Վլադիմիր Կվիչինսկին:

Նոյեմբերի 24-ից լեհ վարպետը սեմինար-պարապմունքներ է անցկացրել հանրապետության մարզերի եւ Ղարաբաղի շուրջ 2 հարյուր սաների հետ, որոնցից մի խումբ հայ կարատեիստներ երեկ նաեւ որակավորման քննություն հանձնեցին:

«Կենտրոն» ազգային ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ Սուրեն Մաթեւոսյանի խոսքով, իրենց ֆեդերացիան մեծ նշանակություն է տալիս միջազգային համագործակցությանը, որի շրջանակներում էլ հրավիրել են կարատեի լեհ վարպետին: Միջազգային ավանդական կարատե դո ֆեդերացիայի Եվրոպայի ֆեդերացիայի փոխնախագահ Վլադիմիր Կվիչինսկին երբոյա սեմինարի շրջանակներում հանդիպել է ոչ միայն սաների հետ, այլեւ անցկացրել է մրցավարական սեմինար կարատեի մարզիչների համար: «Մենք հրավիրել ենք վարպետի, Եվրոպայի ավանդական կարատե դո ֆեդերացիայի փոխնախագահին անցկացնելու սեմինար-պարապմունք, որը կնպաստի երեխաների ու մարզիչների գիտելիքների ավելացմանը: Մրցավարական սեմինարն էլ, որ նախատեսված է մարզիչների համար, կօգնի Եվրոպայի եւ աշխարհի մրցումներին մասնակցող հայ մարզիչներին ճիշտ օգտագործել իրենց գիտելիքները», **«Ազգի»** հետ զրույցում երեկ ասաց «Կենտրոն» ազգային ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ Սուրեն Մաթեւոսյանը: Նախագահը նշեց նաեւ, որ իրենք յուրաքանչյուր տարի դրսից որեւէ վարպետի կհրավիրեն, ինչը կնպաստի փորձի փոխանակմանը:

«Ես ուրախ եմ, որ Հայաստանում այսքան շատ երեխաներ են կարատե պարապում: Երեւում է, որ հոգի են դրել իրենց պարապմունքի մեջ, եւ իրենց մակարդակի, իրենց գոտիների համաձայն շատ լավ մարզված են: Բոլոր ոլորտները, որ ես անում եմ, նրանք աշխատում են շատ արագ կերպով ընկալել եւ կասարել: Կարծում եմ, որ ավանդական կարատեն Հայաստանում բարձր մակարդակի վրա է, բայց դրա հաջողության բանալին այն է, որ լինեն լավ պասրասված մարզիչներ», մեզ հետ զրույցում ասաց Վլադիմիր Կվիչինսկին: Նա նշեց, որ կարատեն ավարտված գործ չէ եւ կասարելագործման համար պահանջում է շարունակական աշխասանք. «Ավանդական կարատեն ճապոնական մարտարվեսի մի մասնիկն է: Ճապոնական մարտարվեսում դրանք հինգն են, միասին կոչվում են բոլոր, կարատեն դրա մի մասնիկն է, եւ այսպես թե այնպես գործիք է հոգին եւ մարմինը կասարելագործելու համար: Կարատեում մեր վերջնական հակառակորդը մենք ենք եւ պետք է կարողանանք հաղթահարել դժվարությունները»: Լեհ վարպետը թեեւ շատ բան չէր հասցրել տեսնել Հայաստանում, բայց արդեն բավական տպավորված էր եւ նշեց, որ կրկին գալու է Հայաստան:

Երեկ որակավորման քննություն հանձնած սաներից 30-ը սացան առաջին, իսկ 10-ը՝ երկրորդ դան:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Առնյանն ու Հակոբյանը մտան հաջորդ փուլ

Խանտի Մանսիյսկում մեկնարկել է շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունը: Գլխավոր մրցանակը վիճարկող 128 շախմատիստները յուրաքանչյուր փուլում նոկաուտ համակարգով կորոշեն զույգերի հաղթողներին: Առաջին փուլում մրցաշարին մասնակցող չորս հայ շախմատիստներից միայն Լեւոն Առնյանին հաջողվեց նախատեսված 2 պարտիաներում առավելության հասնել մրցակցի նկասմամբ ու մտնել հաջորդ փուլ: Աշխարհի ներկայիս գավաթակիրը վսսահ անցկացրեց երկու պարտիաներն էլ եւ երկուսում էլ հաղթեց արգենտինացի Պաբլո Հոբաիկային: Երկրորդ փուլում նրա մրցակիցը կլինի Գերմանիան ներկայացնող Յան Գուսաֆսոնը, որը 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Իսրայելը ներկայացնող Մաֆսիմ Ռոդշտայնին:

Վլադիմիր Հակոբյանին ուզբեկսանցի Անսոն Ֆիլիպովի նկասմամբ առավելության հասնելու համար պահանջվեց արագ շախմատի կանոններով երկու լրացուցիչ պարտիա անցկացնել, քանի որ դասական շախմատի երկու մրցախաղերում էլ մրցակիցները խաղաղ դաշն էին կնքել: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ 3-րդ պարտիան, իսկ 4-րդում Հակոբյանը սպիտակներով 58-րդ քայլում հասավ հաղթանակի: Հաղթելով 2,5-1,5 հաշվով, Վլադիմիր Հակոբյանը եւս մտավ հաջորդ փուլ: Նրա հաջորդ մրցակիցը կլինի ռուսասանցի Վլադիմիր Բելովը, որը 2,5-1,5 հաշվով հաղթեց Ալեքսանդր Խալիֆմանին: Հետաքրքրական է, որ Բելովն էլ Հակոբյանի նման հաջողության հասավ 4-րդ պարտիայում:

Ցավոք, անհաջողության մատնվեց Զավեն Անդրեասյանը: Նրա մրցակիցն ԱՄՆ-ում բնակվող Ալեքսանդր Օնիշչուկն էր: Առաջին երկու պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: 3-րդ պարտիայում Զավենը զիջեց մրցակցին, ինչն էլ կանխորոշեց մրցակցության ելքը: 4-րդ պարտիայում խաղաղ դաշն կնքելով, Օնիշչուկը հաղթեց 2,5-1,5 հաշվով:

Իսկ ահա Վարուժան Հակոբյանի եւ իսրայելցի Միխայիլ Ռոիզի մրցավեճի ելքը վճռվեց կայծակնային մրցախաղում: Դասական եւ արագ շախմատի կանոններով անցկացված բոլոր չորս պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան: Կայծակնային մրցախաղի առաջին պարտիայում սպիտակներով խաղացող հայ շախմատիստը պարտվեց: Երկրորդ պարտիայում Հակոբյանին հաջողվեց սեւերով ռեւանշի հասնել եւ հավասարեցնել հաշիվը: Հաղթողը պետք է որոշվեր վերջին՝ 5-րդ պարտիայում: Հակոբյանը պարտություն կրեց եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Էջը պասրասեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ճարտարապետների միության նախագահ վերընտրվեց Մկրտիչ Մինասյանը

Կայացավ Հայաստանի ճարտարապետների միության 16-րդ համագումարը

Հայաստանի ճարտարապետների միության երկօրյա 16-րդ համագումարի հետ նշվեց նաեւ միության կազմավորման 70-ամյակը:

1937-ի հունիսի 5-ին կայացած Հ�ճՄ առաջին համագումարի ժամանակ վարչության նախագահ ընտրվեց Գեւորգ Քոչարը: Կազմակերպման օրվանից Հ�ճՄ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել խորհրդային Հայաստանի տնտեսության կառուցման եւ մշակութային կյանքին: Հայաստանի ճարտարապետների միությունը՝ որպես ձայնի իրավունքով լիարժեք անդամ 1999-ից մասնակցություն է ունենում ճարտարապետների միջազգային ասոցիացիայի աշխատանքներին:

Համագումարում քննարկվեցին հաշվետու ժամանակներում ճարտարապետների միության աշխատանքները, ընդհանուր հաղթաշինական հաշվետվությունների վիճակը: Եվ ըստ ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանի, այսօրվա ճարտարապետության շրջանակներում ոչ միշտ են տարվում ճիշտ աշխատանքներ՝ խախտելով կարմիր գծերը, վնաս հասցնելով կանաչ տարածքներին:

«Քաղաքի կենտրոնի աղավաղումը մեզ շատ է մտահոգում: Հյուսիսային պողոտայի առումով եթե վերցնենք՝ իսկա ծրագիր էր: Չի կարելի ասել, թե վատ են տարվել աշխատանքները՝ ուղղակի նախագծերի շուրջը պետք է երկար մտածենք եւ ավելի լավ կստացվեր: Հյուսիսային պողոտայի միջավայրը այնպիսին չէ, որը հարիր է մեր կենտրոնին», նկատեց Մկրտիչ Մինասյանը:

Չորս տարի շարունակ Հ�ճՄ-ն պայքարում է, որպեսզի ստեղծագործական միությունների մասին առանձին օրենք կիրառվի: Մկրտիչ Մինասյանը գտնում է, որ ըստ այդ օրենքի, Հ�ճՄ-ն առանձնանալով՝ ավելի կբարձրացնի իր դերը: Հ�ճՄ նախագահը դժգոհություն հայտնեց միության անդամներին՝ իրենց հեռու պահելու ակտիվ գործունեությունից, որ նրանց համագումարից համագումար է հնարավոր տեսնել: Միության անդամներից մի կին էլ իրեն վերապահեց ամբիոնից անպատվել հավակնորդներին՝ մեկնաբանելով, թե հաղթում կատարվող ոչ ճիշտ շինարարական աշխատանքներին միջամտող չեղավ, եւ որ Հյուսիսային պողոտայի կառուցման ժամանակ ոչ մի քննարկում չեղավ: Դժգոհությունները շատ էին, ոմանք Հյուսիսային պողոտան «ֆաշիստական» կառույց անվանեցին, ոմանք էլ շարում էին միության նոր նախագահ ընտրելու հարցում:

Եվ ահա ձայների մեծամասնությամբ Հ�ճՄ-ի նախագահ վերընտրվեց Մկրտիչ Մինասյանը: Այլ էր վիճակը վարչության անդամների ընտրության հարցում: Բանն այն է, որ ըստ Հ�ճՄ-ի հասատած կանոնադրության, վարչության անդամների քանակը պետք է տասնմեկ լիներ, իսկ համագումարը որոշում էր կայացրել ընտրելու քսանմեկ հոգու: Իսկ վերջին քսանմեկերորդ մասնակիցներից երկուսի հավաքած ձայները հավասար էին, որի արդյունքում սացվեց քսաներկու հոգի: Երկար քննարկումներից, կանոնադրությանը կրկին ծանոթանալուց հետո համագումարը որոշեց վարչության անդամների թիվը դարձնել քսաներկուսի:

Աննախադեպ աճել են շինարարության ծավալները: Իրականացվում են խոշոր հաղթաշինական ծրագրեր Երեւանում, արդեն նկատելի է շինարարական աշխուժությունը հանրապետության ամբողջ տարածքում: Կառուցվող նոր ճանապարհները, կամուրջները, առանձին բարձրարժեք կառույցները, բարեկարգված տարածքները դրանց վկայությունն են: Սակայն նկատելի է, որ օր օրի մայրաքաղաք Երեւանը կորցնում է իր թամանյանական տեսքը՝ նմանվելով եվրոպական «բաբլոն» էլիտար շենքերի ու խանութների շարասյան: «Քաղաքաշինական ճարտարապետական դաշտում մենք լուրջ համագործակցության մեջ ենք օտար երկրների ճարտարապետների հետ: Քաղաքը ապրում է վերափոխումների ժամանակահատված, դա վառ վկայությունն են Հյուսիսային պողոտայի կառուցումը, ճանապարհաշինական ցանցի բարելավումը եւ այլն», հավելեց Երեւանի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը:

Երեւանի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը կարդաց Երեւանի քաղաքապետի՝ Հ�ճՄ-ի 16-րդ համագումարին նվիրված ուղերձը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի ճարտարապետներն ակտիվ մասնակցություն են ունեցել Հայաստանի անկախացման, Արցախի ազատագրման, Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ պետության կայացման գործընթացներին:

Վերջում՝ մինչեւ համագումարի ավարտը, պատվավոր դիպլոմներ հանձնվեցին այն ճարտարապետներին, որոնք հիսուն տարի եղել են Հ�ճՄ-ի անդամ:

ՆԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բոլոր անցումների շինարարությունը կավարտվի մինչեւ դեկտեմբերի 25-ը

Բացառությամբ «Այրարատ» կինոթատրոնի տրանսպորտային հանգույցի

Այսպիսի հավաստիացում երեկ Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ տվեց քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետ **Ֆրունզե Բասենցյանը**: Նա մասնավորապես հայտնեց, որ Իսակովի պողոտայի 4 անցումներից 2-ն արդեն ավարտված են, մյուս 2-ը կավարտվեն դեկտեմբերին: Կիեւյան-Օրբելի խաչմերուկների անցումները դարձյալ կավարտվեն մինչեւ դեկտեմբերի 25-ը: Կենդանաբանական այգու մոտ գտնվող անցման վերգետնյա մասի աշխատանքներն ավարտվել են եւ տրանսպորտային երթեւեկության համար այլեւս խնդիրներ չկան: Ստորգետնյա մասի հատվածի շինարարությունը կավարտվի դեկտեմբերի 15-ին:

«Ազգի» հարցին, թե ե՞րբ կավարտվի «Այրարատ» կինոթատրոնի տրանսպորտային հանգույցի շինարարությունը, Ֆրունզե Բասենցյանը պատասխանեց, որ վերգետնյա մասի աշխատանքները կավարտվեն մինչեւ այս տարվա վերջ, իսկ ստորգետնյա մասը եւ ամբողջ շինարարությունը՝ եկող տարի:

2007-ի ընթացքում ամրացվել են 8 վթարային շենքեր, լուսավորվել՝ 80 փողոցներ: 2008-ին կավարտվեն մնացած բոլոր հիմնական փողոցների արտաքին լուսավորության անցկացման աշխատանքները: Վարչության պետը կառուցեց նաեւ 450 հազար քմ մակերեսով ասֆալտապատման իրականացումը եւ 280 հազար քմ փողոցների հիմնանորոգումը:

Դավիթաշենի կամրջի վրա վերջին երկու օրերին տեղի ունեցած բազմաթիվ վթարների եւ մարդկային զոհերի առնչությամբ տրված հարցին պատասխանելով, Ֆրունզե Բասենցյանը ընդգծեց, որ Դավթաշենի կամուրջը տեխնիկական խնդիրներ չունի, իսկ «մնացածը սպասարկման խնդիրներ են»:

Ա. Մ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/91» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«ՀՀ վերաբնակիչ էրեբական դասարանի կարիքների համար բարձրախոսերի ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով**: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ», ՀՎՀ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 Լ.Ավանեսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00:

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ ԵՐԿՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

մասնակցեք մեր ընկերությանը ընտրենք Դաշնակցության թեկնածուին

Հարգելի հայրենակիցներ

2008-ի փետրվարին տեղի կունենան ՀՀ նախագահական ընտրություններ:

ՀՅ Դաշնակցությունը այդ ընտրություններին կմասնակցի սեփական թեկնածուով:

Դիմում ենք ձեզ հետեւյալ առաջարկով.

Միասին որոշենք, թե ով պետք է լինի Դաշնակցության թեկնածուն:

Ձեր խոսքը, որոշումը, քվեն կարեւոր են մեզ համար:

Առաջիկա օրերին հանրապետության բոլոր մարզերում եւ Երեւանում տեղակայված քվեարկության, ինչպես նաեւ շրջիկ քվեատուփերում դրա հնարավորություն կունենաք հայտնելու ձեր տեսակետը, կատարելու ընտրություն մեր թեկնածուների միջեւ:

Վահան Հովհաննիսյան, թե՞ Արմեն Ռուսամյան

Որոշում եք դրա, ընտրությունը ձերն է:

www.azgdaily.com

ՕՐՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ Արամ Ավետիսյանի, Արամ Ղազարյանի, Արամ Ղարիբյանի, Արամ Ղարիբյանի, Արամ Ղարիբ